Բերնար Վերբեր

Բացարձակ և հարաբերական գիտելիքի հանրագիտարան

Ռուսերենից թարգմանությունը՝ Հասմիկ Ղազարյանի

Չմոռանանք, որ ինտելեկտի հարցարանները կազմվում են ապացուցելու համար, որ խելացի են նրանք, ում ինտելեկտն այնպիսին է, ինչպիսին հարցարան կազմողինը:

Նախաբան

Ի մի բերել ամենը, ինչ հայտնի էր իր ժամանակին. այսպիսին էր Էդմոնդ Ուելսի հավակնոտ ծրագիրը: Խառնելով ճշգրիտ ու հումանիտար գիտությունները, քվանտային ֆիզիկան ու խոհարարական բաղադրատոմսերը՝ այդ տաղանդավոր միայնակ գիտնականը ամբողջ կյանքի ընթացքում հավաքում էր քիչ հայտնի փաստեր: Մի հատկանիշ է միավորում այս գրքում ներկայացված բոլոր պատառիկները. դրանք մտածել են տալիս, ինչպես ինքն էր ասում, «նեյրոններին ստիպում են կայծկլտալ»:
Էդմոն Ուելսը ոչ մի բանում կանոններ չէր պահում, չէր հետևում դոգմաներին, ամեն տեսակ «բա ինչ կասեն»-ներին: «Ինձ համար ոչ թե ճշմարտություններ թափահարելն է կարևոր, – պնդում էր նա,- այլ նոր հորիզոններ բացելը»: Հետո ավելացնում էր. «Հարցը երբեմն ավելի հետաքրքիր է լինում, քան պատասխանը»: Բոլորին, ով ուզում էր լսել, նա ասում էր, որ այսօրվա «պաշտոնական» գիտական տվյալների մեծ մասը հերքվելու է վաղվա հայտնագործություններով, դրա համար էլ իր գիրքն անվանել է «Բացարձակ և հարաբերական գիտելիքի հանրագիտարան»:
Պրոֆեսոր Էդմոնդ Ուելսը, նրան ճանաչողների վկայությամբ, շատ սրամիտ մարդ էր ու մեծ նշանակություն էր տալիս պարադոքսներին: Բայց ամենազարմանալի պարադոքսն, իհարկե, հենց ինքն էր՝ մի մարդ, որ, ինչպես արդեն գիտենք, երբեք գոյություն չի ունեցել...
Ժամանակակից կապիտան Նեմոն, լինելով փիխրուն ու մարդախույս, Բերնար Վերբերի բոլոր վեպերում ընթերցողին գիտությունից տանում է դեպի փիլիսոփայություն:

Մեր մեջ ասած

Նրա, որ մտածում եմ,
որ ուզում եմ ասել,
որ ինձ թվում է՝ ասում եմ,
որ ասում եմ,
ու նրա մեջ,
որ դուք ուզում եք լսել,
որ ձեզ թվում է՝ լսում եք,
որ լսում եք,
որ ուզում եք հասկանալ,
որ կարծում եք՝ հասկանում եք,
որ հասկանում եք.-

տասից մի հնարավորություն կա, որ չեն առաջանա շփման դժվարություններ:
Բայց, այնուամենայնիվ, փորձենք….

Անհայտությունը

Մարդուն ամենից շատ անհայտությունն է վախեցնում: Հենց որ այդ անհայտությունը, նույնիսկ թշնամականը, բացահայտվում է, թեթևություն ես զգում: Անտեղյակությունն ստիպում է երևակայությանն աշխատել: Այդտեղ արտահայտվում է ամեն մեկի միջի դևը՝ նրա «ամենավատ ինքնությունը»: Կարծելով, որ բախվելու է խավարին՝ մարդը դուրս է գալիս սեփական ենթագիտակցության երևակայական հրեշների դեմ: Եվ հենց այն պահին, երբ

մարդը բախվում է ինչ-որ նոր ու անհայտ բանի հետ, նրա գիտակցությունը շատ ավելի արդյունավետ է աշխատում: Նա ուշադիր է: Նա զգոն է: Բոլոր զգայարաններով աշխատում է հասկանալ անհայտը, որ ազատվի վախից: Նա իր մեջ շնորհներ է բացահայտում, որոնց գոյության մասին չէր էլ մտածում: Անհայտությունը հուզում և ձգում է: Մարդը վախենում է դրանից, բայց և հավատում է, որ իր ուղեղը կարող է ճիշտ լուծումը գտնել ու հարմարվել դրան: Քանի դեռ առարկան անվանված չէ, իր մեջ մարտահրավեր ունի մարդու համար:

Գերլուսային մարդը

Գիտակցության ֆենոմենի մասին ամենաավանգարդիստական տեսությունների մեջ առանձնապես աչքի է ընկնում մեկը, որ առաջարկվել է Պուատյեի բժշկական ֆակուլտետի ֆիզիկայի պրոֆեսոր Ռեժի Դյուտեյի կողմից: Այս հետազոտողի կողմից մշակված առանցքային թեզը հիմնվում է Ֆեյնբերգի աշխատությունների վրա: Համաձայն դրանց՝ իրենց մասնիկների շարժման արագությամբ իրարից տարբերվող երեք աշխարհ գոյություն ունի: Առաջինը «մինչլուսային» աշխարհն է, որտեղ ապրում ենք մենք: Սա նյութի աշխարհն է, որ ենթարկվում է նյուտոնյան դասական ֆիզիկայի և գրավիտացիայի օրենքներին: Այս աշխարհը բաղկացած է բրադիոնից, այսինքն՝ մասնիկներից, որոնց շարժման արագությունը լույսի արագությունից քիչ է:

Երկրորդ աշխարհը «լուսայինն» է: Այս աշխարհը բաղկացած է լույսի արագությանը մոտ արագությամբ շարժվող մասնիկներից՝ Էյնշտեյնի հարաբերականության օրենքներին ենթարկվող լուկսոններից:

Վերջապես գոյություն ունի «գերլուսային» տարածություն-ժամանակը: Այդ աշխարհը բաղկացած է մասնիկներից, որոնց արագությունը գերազանցում է լույսի արագությունը: Դրանք կոչվում են տախիոններ:

Համաձայն Ռեժի Դյուտեի, այս երեք աշխարհները համապատասխանում են մարդու գիտակցության երեք մակարդակներին:

Զգացմունքների մակարդակը, որ ըմբռնում է նյութականը, լոկալ գիտակցության մակարդակը, որ լուսային միտք է, այսինքն՝ այն, ինչ շարժվում է լույսի արագությամբ, և գերգիտակցության մակարդակը՝ մտքեր, որ շարժվում են լույսից արագ: Դյուտեյը համարում է, որ գերգիտակցության հնարավոր է հասնել երազում, մեդիտացիայի և որոշ թմրանյութերի օգնությամբ: Բայց նա խոսում է նաև ավելի ընդարձակ հասկացության՝ գիտելիքի մասին: Տիեզերքի մասին իրական գիտելիքի շնորհիվ մեր գիտակցությունը կարագանար ու կհասներ տախիոնների աշխարհին:

Դյուտեյը ենթադրում է, որ «գերլուսային» տիեզերքում ապրող արարածի համար նրա կյանքի բոլոր իրադարձությունները կկատարվեին միաժամանակ: Այդպես, «անցյալ», «ապագա» ու «ներկա» հասկացությունները կխառնվեին ու կանհետանային: Միանալով Դեյվիդ Բոմի եզրակացություններին՝ Դյուտեյը համարում է, որ մահից հետո մեր լուսային գիտակցությունը հասնում է ուրիշ՝ ավելի բարձր էներգետիկ մակարդակի՝ տիխիոնների տարածություն-ժամանակին: Կյանքի վերջում Ռեժի Դյուտեյը, իր դստեր՝ Բրիջիտի օգնությամբ, մշակել է էլ ավելի համարձակ տեսություն, համաձայն որի ոչ միայն անցյալը, ներկան ու ապագան են

մեկտեղված «այստեղի» և «հիմայի» մեջ, այլև մեր բոլոր կյանքերը՝ նախորդներն ու հաջորդները, հոսում են մեր ներկա կյանքի հետ համաժամանակյա գերլուսային չափումներում:

Սիրո չորս մակարդակները

Մանկավարժական հոգեբանությունն առանձնացնում է սիրո չորս մակարդակ:

Առաջին մակարդակ՝ «Ինձ սեր է պետք»:

Սա մանկական մակարդակ է: Նորածինը կարիք ունի գուրգուրանքի, համբույրների, ավելի մեծ երեխան՝ նվերների: Նա անընդհատ իրեն շրջապատողներին հարցնում է. «Դուք ինձ սիրո՞ւմ եք»: Եվ պահանջում է սիրո ապացույցներ: Առաջին հարթության վրա այդ հարցը տալիս ենք ուրիշներին, հետո՝ ինչ-որ մեկին՝ նրան, ում կարծիքը մեզ համար ամենից կարևորն է:

Երկրորդ մակարդակ՝ «Ես կարող եմ սիրել»:

Սա հասունության մակարդակ է: Տեղի է ունենում ուրիշ մարդու նկատմամբ զգացմունք ունենալու սեփական ընդունակության, այսինքն՝ իր սերը դուրս, հատկապես դեպի իր ընտրյալը հեղելու կարողության բացահայտում: Այս զգացմունքն արբեցնում է անհամեմատ ավելի ուժեղ, քան գիտակցումը, որ ինչ-որ մեկը սիրում է ձեզ: Որքան ուժգին եք սիրում, այնքան պարզ եք հասկանում՝ ինչ իշխանություն է տալիս ձեզ այդ զգացումը: Սիրելու պահանջմունքը դառնում է անհրաժեշտություն, ինչպես թմրանյութը:

Երրորդ մակարդակ՝ «Ես սիրում եմ ինձ»:

Սփռելով իր սերն ուրիշների վրա՝ մարդն իմանում է, որ կարող է իրեն էլ սիրել: Այս փուլի առավելությունը նախորդ երկուսի նկատմամբ այն է, որ կախում չունես ուրիշներից: Քեզ ոչ ոք պետք չէ ո՛չ նրա համար, որ նրա սերն զգաս, ո՛չ նրա համար, որ սեր նվիրես: Հետևաբար, այլևս հիասթափություն ապրելու կամ սիրող ու սիրած մարդու դավաճանության վտանգը չկա: Սիրո չափը հնարավոր է որոշել սեփական պահանջմունքներին խիստ համապատասխան՝ հույս չդնելով ուրիշի օգնությանը:

Չորրորդ մակարդակ՝ «Ամբողջ աշխարհի նկատմամբ սեր»:

Սա անսահման սերն է: Երբ մարդ սովորում է սեր ստանալ ու տալ և սիրել իրեն, նա սկսում է տարածել սերն իր շուրջը՝ բոլոր ուղղություններով: Եվ ճիշտ նույն կերպ էլ ստանում է սերը:

Անձնական հակումներից կախված՝ մարդիկ սիրուն կարող են տարբեր անուններ տալ՝ Կյանք, Բնություն, Երիր, Տիեզերք, Կի, Աստված և այլն:

Խոսքը այն հասկացության մասին է, որը, երբ հասնում ես դրան, ընդարձակում է մտահորիզոնդ:

Երեք անարգանք
Մարդկությանը երեք անարգանք է հասցվել:

Առաջինը՝ երբ Նիկոլայ Կոպեռնիկոսն ապացուցեց, որ Երկրագունդը տիեզերքի կենտրոնը չէ:

Երկրորդը՝ երբ Չարլզ Դարվինը եզրակացրեց, որ մարդն առաջացել է կապիկից, նշանակում է նույնպես կենդանի է:

Երրորդը, երբ Զիգմունդ Ֆրեյդը բացատրեց, որ մեր քաղաքական դեմարշների կամ գեղարվեստական արտահայտությունների մեծ մասի հիմքում սեքսուալությունն է:

Իսկ եթե տիեզերքում մենք մենա՞կ ենք…
Մի օր մի տարօրինակ միտք մտավ գլուխս. «Իսկ եթե մենք տիեզերքում մենա՞կ ենք»: Նույնիսկ մինչև ուղնուծուծը սկեպտիկները հոգու խորքում հույս ունեն, որ այլմոլորակայինները գոյություն ունեն, և, եթե մենք տանուլ տանք, հնարավոր է՝ ինչ-որ շատ հեռու մի տեղ ապրող ուրիշ բանական արարածների բախտն ավելի բերի: Եվ սա հույս է ներշնչում:
Իսկ եթե մենա՞կ ենք: Միանգամայն մենակ: Եթե անսահման տիեզերքում էլ ուրիշ կենդանի ու բանականությամբ օժտված բան չկա: Եթե բոլոր մոլորակները նման են նրանց, որ տեսնում ենք արեգակնային համակարգությունում՝ չափազանց սառը կամ չափազանց տաք՝ բաղկացած գազային մագմայից կամ քարի՞ց: Իսկ եթե երկրային փորձը պատահականությունների ու համընկումների առանձնահատուկ մի շղթա է և էլ ոչ մի տեղ չի կրկնվելո՞ւ: Իսկ եթե սա միակ ու անկրկնելի հրա՞շք է:

Նշանակում է՝ եթե մենք քննությունից կտրվենք, կործանենք մեր մոլորակը (իսկ ոչ վաղ ժամանակներից սկսած՝ դա կարող ենք անել միջուկային զենքով, շրջակա միջավայրը աղտոտելով և այլն), այլևս ոչինչ չի մնա: Մեզնից հետո հնարավոր է game over, և նոր խաղ էլ չես կարող սկսել: Միգուցե մենք վերջին շանսն ենք: Այդ դեպքում տապալումը հրեշավոր կլինի:

Այն միտքը, որ այլմոլորակայիններ չկան, ավելի շատ տագնապ է առաջացնում, քան այն, որ նրանք կան: Մարդու գլուխ է պտտվում: Տես՝ ինչ պատասխանատվություն է մեզ վրա դրված: Երևի հենց սա էլ ամենահին ու ամենատոկալի հաղորդագրությունն է՝ «Հնարավոր է՝ մենք մենակ ենք տիեզերքում, ու եթե մենք տապալվենք, էլ ոչ մի տեղ ոչինչ չի լինի»:

Համագործակցություն, փոխադարձ հարգանք, ներում
1974 թվին Տորոնտոյի համալսարանի փիլիսոփա և հոգեբան Անատոլի Ռապապորտը իր միտքն է արտահայտում այն մասին, որ մարդկային շփումների ամենաարդյունավետ մոդելը այսպիսի տեսք ունի՝ 1.համագործակցություն, 2. փոխադարձ հարգանք, 3. ներում: Այլ կերպ ասած՝ եթե անհատը, կառույցը կամ խումբը բախվում է ուրիշ անհատների, կառույցների և խմբերի հետ, ամենաձեռնտուն կապ գտնելն է: Հետո փոխադարձ հարգանքի օրենքով կարևոր է գործընկերոջը հատուցել նույնով, ինչ իրենից ստանում ես: Եթե նա ձեզ օգնում է, օգնեք, եթե հարձակվում է, ի պատասխան հարձակվեք նույն կերպ և նույն ուժգնությամբ: Ի վերջո հարկավոր է ներել և նորից համագործակցություն առաջարկել:

1979 թվին մաթեմատիկոս Ռոբերտ Աքսելրոդը համակարգչային ինքնավար ծրագրերի մրցույթ կազմակերպեց, որոնք ընդունակ էին արձագանքելու կենդանի արարածների պես: Միակ պայմանը հետևյալն էր. ամեն ծրագիր պիտի ապահովված լինի հաղորդակցական միջոցով և հարևանների հետ շփվելու և կապի մեջ մտնելու հնարավորություն ունենա:

Ռոբերտ Աքսելրոդը տասնչորս խտասկավառակ ծրագիր ստացավ, որ ուղարկել էին տարբեր համալսարանների իր գործընկերները: Ամեն ծրագիր առաջարկում էր վարքագծի տարբեր մոդելներ (ամենապարզից՝ գործողությունների ծրագիրը՝ երկու տող, մինչև ամենաբարդերը՝ հարյուրավոր տողանոց): Հաղթողը պիտի հավաքեր առավելագույն միավորներ:

Որոշ ծրագրեր փորձում էին որքան հնարավոր է շուտ սկսել հարևանին շահագործել՝ նրա միավորները գողանալ ու գործնկերոջը փոխել: Ուրիշները ջանում էին մենակ գործել՝ խանդով պահպանելով իրենց ձեռքբերումները և խուսափելով շփումից նրանց հետ, ովքեր ընդունակ են գողանալու: Կային վարքի այսպիսի կանոնով ծրագրեր. «եթե ինչ-որ մեկը թշնամանք է արտահայտում, հարկավոր է խնդրել, որ փոխի իր վերաբերմունքը, հետո պատժել»: Կամ՝ «համագործակցել, հետո հանկարծ դավաճանել»:

Ծրագրերից ամեն մեկը երկու հարյուր անգամ պայքարի մեջ է մտել յուրաքանչյուր մրցակցի հետ:

Անատոլի Ռապապորտի ծրագիրը՝ զինված ՀՓՀՆ (համագործակցություն, փոխադարձ հարգանք, ներում) մոդելով, հաղթող դարձավ:
Ավելին՝ ուրիշ ծրագրերի մեջ գործող և սկզբում ագրեսիվ հարևաններից պարտվող ՀՓՀՆ ծրագիրը ոչ միայն հաղթեց, այլև «վարակեց» մյուսներին, հենց իրեն մի քիչ ժամանակ տվեցին: Մրցակիցները հասկացան, որ նրա մարտավարությունն ավելի արդյունավետ է միավորներ հավաքելու համար, և կազմակերպվեցին ըստ դրա: Ժամանակը ցույց տվեց մեթոդի ճիշտ լինելը:

Բանն այստեղ բարությունը չէ, այլ համակարգչային ծրագրերով ապացուցված անձնական շահը:

Մարդու ծագման մասին մի քանի առասպել
Հույները: Դևկալիոնն ու Պիրան՝ նրա կինը, հույների համար միակ մարդիկ էին, որ վերապրել են ջրհեղեղից հետո: Եվ աստվածները նրանց հանձնարարել են նոր մարդկություն հիմնել: Դևկալիոնն ու Պիրան սկսել են քարեր շպրտել իրենց մեջքի հետևը, և այդ քարերը վերածվել են արձանների: Արձանները երգել են, Դևկալիոնն ու Պիրան էլ պիտի ընտրեին մարդկության մասին իրենց ամենից շատ դուր եկած երգը:Նրանք բոլորից շատ հավանել են հույն հերոսների՝ Թեսևսի, Պերակլեսի և ուրիշ կիսաստվածների մասին երգը: Եվ երկրի վրա մարդկությունը վերստեղծվել է: Դևկալիոնն ու Պիրան մեռել են, բայց նրանց մերժած երգող արձանները աստվածներից դատ և արդարություն են պահանջել: Աստվածները որոշել են դատավճիռ կայացնել՝ Դևկալիոնի ու Պիրայի որոշումը կշռելով: Եվ ամուսնական զույգի որոշումը համարել են ճիշտ: Հերոսներին գովերգող մարդկությունը երկրի վրա միակն էր:

Թուրքերը: Թուրքերի համար մարդկությունն առաջացել է սև լեռան վրա: Մի քարանձավում մարդու մարմին հիշեցնող փոս է առաջացել, անձրևի շիթերը կավ են բերել-լցրել դրա մեջ:

Կավը, որ տաքանում էր արևից, մնացել է ինն ամիս: Իսկ ինն ամիս հետո քարանձավից դուրս է եկել առաջին մարդը՝ Հայ-Աթամը, ում համարում էին լուսնի հայրը:

Մեքսիկացիները (17-րդ դար): Այստեղ հին պաշտամունքի ու կաթոլիկության խառնուրդ է ստացվել: Աստված մարդուն ստեղծել է խեցեգործի կավից և դրել վառարան: Բայց չափազանց երկար է թողել վառարանում: Դրա համար էլ մարդը վառված ու սև է դուրս եկել: Աստված համարել է, որ սխալվել է, և շպրտել է իր արարածը երկիր: Սա ընկել է Աֆրիկայի վրա: Սրանով Աստված չի բավարարվել և երկրորդ մարդուն է արարել, որին վառարանում շատ ավելի քիչ է թողել: Մարդը վառարանից լրիվ սպիտակ է դուրս եկել: Աստված էլի համարել է, որ սխալվել է: Նորից մարդուն շպրտել է երկիր, սա ընկել է Եվրոպայի վրա: Երրորդ անգամ Աստված որոշում է ուշադիր հետևել, թե երբ է պատրաստ լինելու իր արտադրանքը: Սպասել է, մինչև մարդը ինչպես հարկն է՝ խարկվի, մինչև ոսկեգույն դառնալը: Այս անգամ հաջողության է հասել: Եվ առանց շտապելու, շատ զգույշ տեղադրել է մարդուն Ամերիկայում: Այսպես են ի հայտ եկել մեքսիկացիները:

Սիուները: Ըստ սիուների առասպելի՝ մարդուն ստեղծել է տիեզերական ճագարը, որ ճանապարհին արյան խտուկ է գտել: Ճագարն սկսել է թաթով խաղալ դրա հետ, և խտուկը վերածվել է աղիքի: Ճագարը շարունակել է զվարճանալ, և աղիքի վրա հայտնվել են սիրտը, հետո աչքերը, ի վերջո, ստացվել է իսկական փոքրիկ մի տղա՝ աշխարհում առաջին տղան: Ճագարնը նրան անվանել է ճագար-տղա: Դա սիուների նախնին է եղել:

Արաբները: Արաբներն ունեն Հին կտակարանի տարբերակը: Ըստ նրանց տեսության՝ մարդու ստեղման համար հարկավոր է չորս տարբեր գույների՝ կապույտ, սև, սպիտակ ու կարմիր հող: Աստված Գաբրիել հրեշտակին ուղարկում է դրանց հետևից: Բայց հենց սա թեքվում է, որ հող վերցնի, հողն սկսում է խոսել և հարցնում է, թե ինչ է ուզում: «Հող, որ Աստված կարողանա մարդ արարել»,- բացատրում է Գաբրիելը: Հողը պատասխանում է. «Չեմ կարող դա թույլ տալ, որովհետև մարդն անկառավարելի կլինի և ինձ կկործանի»: Գաբրիել հրեշտակը հաղորդում է սա Աստծուն: Դրանից հետո Աստված ուղարկում է Միքայել հրեշտակին: Նույն պատմությունն է լինում: Նույն անհաջողությունը: Հողը չի ուզում, որ մարդ ստեղծվի: Հետո Աստված ուղարկում է Ազրայիլին, որը մահվան հրեշտակ էր: Հողի փաստարկը նրան չի համոզում: Այսպիսով՝ մարդը գոյություն ունի մահվան հրեշտակի շնորհիվ, դրա համար էլ մարդը մահկանացու է:

Բերված հողից Աստված արարում է Ադամին: Բայց քառասուն տարի սա ոչինչ չի անում, պարզապես պառկած է մնում հողի վրա: Հրեշտակը չի հասկանում, թե ինչու մարդը չի շարժվում: Նա նայում է Ադամի բերանի մեջ, որ տեսնի՝ մեջն ինչ կա, և ամեն ինչ հասկանում է: Մարդու մարմնի մեջը դատարկ է լինում: Հրեշտակը պատմում է սա Աստծուն, և Աստված որոշում է մարդուն հոգի տալ: Ադամը կենդանանում է, և Աստված, որ նրան հողի, բնության, կենդանիների նկատմամբ առավելություն տա, իրավունք է տալիս անվանելու այն ամենը, ինչ շրջապատում է իրեն: Միայն մարդն իրավունք ունի անուն տալու անգամ ոգիներին (ջիներին) ու լեռներին: Եվ ամեն անգամ, հենց նա անուն է արտասանում, իրեն է ենթարկում այն, ինչի անունը տալիս է: (Թաբառի, 9-րդ դարի արաբ պատմիչ, Աբասիդների խալիֆայություն):

Մոնղոլները: Մարդն արարվել է Աստծո կողմից, ով հողի մեջ մարդու ձևի փոս է փորել: Հետո փոթորիկ է արել, ու կավը ջրի հեղեղի հետ լցրել է փոսը: Անձրևը դադարել է, խոնավությունը չորացել, և մարդը կարկանդակի պես դուրս է եկել փոսից:

Նավախոները: Առաջ երկրի վրա ապրել են կիսամարդ-կիսագազանները: Նրանք կտրել են երեք երկինք, որտեղից վտարվել են իրենց հիմարության պատճառով: Ի վերջո իջել են երկիր, որտեղ չորս տեղական աստված՝ կապույտը, սպիտակը, սևը ու դեղինը, գալիս են, որ տեսնեն սրանց: Աստվածները փորձում են շարժումներով սրանց մի բան սովորեցնել: Բայց չմարդիկ ոչինիչ չեն հասկանում: Այդ ժամանակ բոլոր աստվածները, բացի մեկից՝ սևից, թողնում գնում են: Սևն այդ կիսամարդկանց ասում է, որ սրանք կեղտոտ ու գարշահոտ հիմարներ են: «Մյուս աստվածները չորս օրից կգան,-ասում է,- լվացվեք, որ անցնենք մարդու արարման ծեսին»:

Աստվածներն իրենց հետ տարբեր առարկաներ են բերում, եղջերվի մորթիներ ու երկու հասկ եգիպտացորեն՝ դեղին ու սպիտակ: Սպիտակից դուրս է գալիս տղամարդը, իսկ դեղինից՝ կինը: Նրանք ծածկի տակ սիրով են զբաղվում և ծնում են հինգ զույգ երկվորյակներ: Առաջին երկուսը հերմոֆրոդիտ էին, բայց մյուսները երեխաներ են ծնում, ու այդ երեխաները, եկվոր ժողովուրդների հետ են վերաամուսնանում: Այսպես առաջանում է ժամանակակից մարդկությունը:

Ձողաձկան մուտացիան
Վերջերս հայտնաբերվել է ձողաձկան՝ իր գերարագ մուտացվելու ընդունակությամբ գիտնականներին զարմացրած տեսակ:
Այս տեսակը, որ բնակվում է սառը ջրերում, նշանակալիորեն ավելի զարգացած դուրս եկավ, քան տաք ջրերում հանգիստ ապրող ձողաձկները: Գիտնականները ենթադրում են, որ ցածր ջերմաստիճանի պատճառով մշտական սթրեսը մշակել է ձողաձկան այս տեսակի մեջ զարմանալի դիմացկունություն:

Երեք միլիոն տարի առաջ մարդը ձեռք է բերել բարդ մուտացիայի ճիշտ այդպիսի ընդունակություն: Հիմա դա ոչ լրիվ է արտահայտվում, քանի որ ուղղակի էլ պետք չէ: Բայց պահպանվում է, համենայնդեպս:
Ժամանակակից մարդն իր գեներում թաքնված հսկայական ռեսուրսներ ունի, որոնցից չի օգտվում, որովհետև դրա կարիքը չկա:

Պոլ Կամերեր
Գրող Արթուր Կեստլերը մի անգամ ուզեց գիրք գրել՝ նվիրված գիտական խարդախությանը: Նա հարցուփորձ արեց հետազոտողների շրջանում, և սրանք հավատացրին գրողին, որ գիտական խաբեության ամենաանամոթ օրինակը դոկտոր Պոլ Կամերերի արածն է: Կամերերը ավստրիացի կենսաբան էր, որ իր բացահայտումներն արել է 1922-1229 թվերին: Հրաշալի հռետոր, հմայիչ և անմնացորդ իր գործին նվիրված գիտնականը պնդում էր, որ «…ցանկացած կենդանի արարած ընդունակ է հարմարվելու շրջապատում կատարված փոփոխություններին և ձեռք բերած հատկանիշները փոխանցելու սերնդին»: Այս տեսությունը ուղղակի հակասում էր դարվինականին: Որպեսզի ապացուցեր իր եզրակացությունների հիմնավորվածությունը, դոկտոր Կամերերը մի շատ հանդիսավոր գիտափորձ արեց:
Նա վերցրեց ցամաքում բազմացող լեռնային դոդոշի ձկնկիթը և տեղադրեց ջրի մեջ: Այդ

ձկնկիթից դուրս եկած ձագերը հարմարվեցին նոր պայմաններին և ձեռք բերեցին լճային դոդոշների առանձնահատկություններ: Նրանց մեծ մասի վրա հայտնվեցին սև կոպուլյատորային գնդիկներ, որ հնարավորություն են տալիս ջրային որձ դոդոշներին ջրում զուգավորվելու համար կպչելու էգերի սղլիկ մաշկին: Ջրային միջավայրին հարմարվածությունն անցավ սերնդին, որ արդեն ծնվեց մեծ մասին մուգ գույնի գնդիկով: Այդպիսով՝ ապացուցված էր, որ կենդանի արարածները կարող են փոխել իրենց գենետիկական ծրագիրը, որ հարմարվեն ջրային միջավայրին:

Կամերերը բոլորին հայտնի հաջողությամբ աշխարհում ամեն տեղ ապացուցում էր իր տեսության իրավացիությունը:
Մի անգամ գիտնականներն ու համալսարանների ներկայացուցիչները ցանկություն հայտնեցին «օբյեկտիվորեն» ուսումնասիրելու նրա գիտափորձը: Ամֆիթատրոնում հավաքվել էր մարդկանց բազմությունը, ուր շատ լրագրողներ կային: Դոկտոր Կամերերը հույս ուներ, որ այս անգամ կապացուցի բոլորին, որ ինքը խաբեբա չէ:

Գիտափորձի նախօրյակին լաբորատորիայում հրդեհ բռնկվեց, և բոլոր դոդոշները, բացի մեկից, զոհվեցին: Դրա համար էլ Կամերերն ստիպված էր հանրությանը ներկայացնել մուգ գնդիկ ունեցող մեն միակ դոդոշը: Գիտնականները զննեցին երկկենցաղին խոշորացույցով և ծիծաղից թուլացան: Հստակ երևում էր, որ դոդոշի մեծ մատի վրայի սև գնդիկը արհեստական էր՝ մաշկի տակ չինական թանաք սրսկելով արված:

Խարդախությունը բացահայտված էր: Դահիճը հռհռում էր:

Մի րոպեում Կամերերը կորցրեց և՛ վստահությունը, և՛ հույսը, որ իր գործերը կընդունվեն: Նա լքեց լսարանը համընդհանուր սուլոցների տակ: Բոլորից մերժված՝ նա գիտական աշխարհից աքսորյալ էր: Դարվինիստները հաղթեցին: Հուսահատության մեջ նա գնաց անտառ ու կրակեց իր բերանին՝ թողնելով մի կարճ նամակ, ուր մի անգամ ևս հաստատում էր իր գյուտի իրական լինելը և հայտարարում «բնության գրկում, ոչ թե մարդկանց մեջ մեռնելու» ցանկության մասին: Ինքնասպանությունն ամբողջացրեց նրա վարկաբեկումը:

Այդ ընթացքում Արթուր Կեստլերը «Դոդոշի գրկախառնումը» գրքի համար նյութերի փնտրտուքի մեջ հանդիպում է Կամերերի նախկին օգնականին: Եվ սա խոստովանում է գրողին, որ հենց ինքն է եղել աղետի մեղավորը: Մի խումբ դարվինիստ-գիտնականների կողմից հրահրվելով՝ օգնականը հրդեհել է լաբորատորիան և վերջին մուտանտ դոդոշին փոխարինել ուրիշով՝ սովորականով, որի մեծ մատի մեջ չինական թանաք է սրսկել:

Հոմեոսթազ
Բոլոր կենդանի տեսակները ձգտում են հոմեոսթազի: Հոմեոսթազը ներքին և արտաքին միջավայրերի հավասարակշռությունն է: Ցանկացած կենդանի կառուցվածք գործում է հոմեոսթազում: Թռչունների ոսկորները սնամեջ են, որ սրանք կարողանան թռչել: Ուղտը ջրի պաշար ունի, որ անապատին դիմանա: Քամելիոնը փոխում է մաշկի գույնը, որ գիշատիչների համար աննկատ դառնա: Այս տեսակները, ինչպես նաև շատ ուրիշները, հաջողացրել են ապրել մինչև մեր օրերը՝ հարմարվելով շրջակա միջավայրի բոլոր փոփոխություններին: Ով չի հասել արտաքին աշխարհի հետ հավասարակշռության, վերացել է:

Հոմեոսթազը մեր օրգանների ինքնակարգավորման ընդունակությունն է՝ արտաքին աշխարհի ազդեցությամբ: Ապշեցուցիչ օրինակներ կան, որ ամենահասարակ մարդիկ կարողանում են տանել ամենադաժան փորձությունները և իրենց օրգանիզմը դրան սովորեցնել:
Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» և Ժյուլ Վերնի «Խորհրդավոր կղզին» գրքերը փառաբանում են մարդ արարածի՝ հոմեոսթազին ընդունակ լինելը:

Մենք բոլորս կատարյալ հոմեոսթազի մշտական փնտրտուքի մեջ ենք. դրանով են զբաղված մեր բջիջները: Դրանք մշտապես պահանջում են իդեալական ջերմաստիճանի կենարար հեղուկի հնարավոր ամենաշատ քանակը՝ առանց ագրեսիվ թունավոր նյութերի պարունակության: Բայց եթե բջիջները չեն ստանում այդպիսի հեղուկ, ադապտացվում են: Օրինակ՝ հարբեցողի լյարդն ավելի լավ է յուրացնում ալկոհոլը, քան մշտասթափ մարդունը: Ծխող մարդու թոքերը պաշտպանություն են հանդես բերում նիկոտինի նկատմամբ: Միհրդատ արքան իր օրգանիզմն անգամ մկնդեղի էր վարժեցրել:

Որքան թշնամական է շրջակա միջավայրը, այնքան լավ են բջիջները կամ կենդանի արարածները զարգացնում իրենց մինչ այդ անհայտ տաղանդները:

Հայելին
Ուրիշ մարդու հայացքում մենք նախ և առաջ փնտրում ենք սեփական արտացոլանքը: Սկզբում դա ծնողների հայացքն է:
Հետո ընկերների հայացքն է:
Հետո ճամփա ենք ընկնում՝ գտնելու այն միակ հայելին, որն այդուհետ մեր ուղեցույցն է լինելու: Գնում ենք՝ գտնելու սերը, ավելի ճիշտ՝ գտնելու սեփական անհատականությունը: Մերն առաջին հայացքից հաճախ նշանակում է, որ «լավ հայելի» ենք գտել, որի արտացոլքը մեզ դուր է գալիս: Այդ ժամանակ սկսում ենք սիրել մեզ այնպիսին, ինչպիսին արտացոլվում ենք ուրիշի աչքերում: Կախարդական պահ է, երբ դեմ դիմաց դրված երկու հայելի փոխանակում են իրենց հաճելի արտացոլանքները: Հերիք է՝ երկու հայելի դնենք իրար դիմաց, ու կտեսնենք՝ ինչպես են հարյուրավոր արտացոլանքներ դրանցում գնում դեպի անսահման հեռանկարը: Այդպես «լավ հայելին» մեր բազմաթիվ կրկնօրինակներն է ստեղծում ու բացում է անվերջ հորիզոններ: Օ՜հ, հզորության ու հավիտենության ի՜նչ զարմանալի զգացում է դա:

Բայց հայելիները տեղում կանգնած չեն. շարժվում են: Երկու սիրահարները աճում են, հասունանում, զարգանում:

Սկզբում նրանք դեմքով ուղղված էին իրար, բայց եթե նույնիսկ իրենց առաջընթացում նրանք գնում են զուգահեռ ճանապարհներով, ոչ միշտ են քայլում նույն արագությամբ և նույն ուղղությամբ: Էլ նրանց պետք չէ մշտապես տեսնել իրենց նույն արտացոլանքը:
Այդ ժամանակ ճաք է տալիս. այն պահն է, երբ քո առաջ էլ չկա ուրիշ հայելի: Դա ոչ միայն սիրո ավարտն է, այլև սեփական արտացոլանքի կորուսը: Մարդն այլևս չի տեսնում իրեն ուրիշի աչքերում: Նա այլևս չգիտի՝ ինքն ով է:

Տեսակետ
Եթե մարդկության ամբողջ պատմությունն ամփոփենք մեկ շաբաթում, օրը հավասար կլինի 660 միլիոն տարվա:

Եկեք պատկերացնենք, որ մեր պատմությունն սկսվում է երկուշաբթի օրը: Զրո ժամին առաջանում է հսկայական գունդը՝ Երկիրը: Երկուշաբթի, երեքշաբթի և հաջորդ օրվա առավոտյան ոչինչ տեղի չի ունենում: Չորեքշաբի կեսօրին նոր հայտնվում են կյանքի առաջին ձևերը՝ բակտերիաները:
Հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ առավոտյան բակտերիաներն անշեղորեն բազմանում են և դանդաղ զարգանում:
Շաբաթ օրը՝ կեսօրից հետո՝ մոտավորապես ժամը 16-ին, հայտնվում են առաջին դինոզավրերը: Հինգ ժամ անց նրանք այլևս չկան: Առավել մանր ու թույլ կենդանիներն անկանոն տարածվում են Երկրի վրա, ծնվում ու անհետանում: Մնում է բնական աղետներից պատահաբար փրկված միայն մի քանի տեսակ:
Շաբաթ, կեսգիշերից երեք րոպե պակաս. հայտնվում է մարդը: Կեսգիշերից քառորդ վայրկյան պակաս հայտնվում են քաղաքները: Կեսգիշերից վայրկյանի քառասուներորդական պակաս մարդն օգտագործում է առաջին ատոմային ռումբը և երկրից դուրս թռչում, որ առաջին անգամ ոտք դնի լուսնին:

Մեզ թվում է, թե մեր պատմությունը անհավանականորեն երկար է ձգվում: Իրականում մենք՝ «նորագույն մտածող կենդանիներս», հայտնվել ենք ընդամենը վայրկյանի քառասուներորդ պակաս մի շաբաթի ավարտից, որի ընթացքի մեջ գոյություն ունի մեր մոլորակը:

Փորձ շիմպանզեների վրա
Հինգ շիմպանզե նստած են դատարկ սենյակում, որի մեջտեղում աստիճան կա: Աստիճանի վրա բանան կա:

Առաջին կապիկը նկատում է բանանն ու մագլցում դրա հետևից, որ վերցնի, ուտի: Բայց հենց մոտենում է մրգին, առաստաղից սառցե ջրի շիթը թափվում է գլխին ու նրան ցած գլորում: Մյուս կապիկներն էլ են փորձում բարձրանալ աստիճանի վրա: Բոլորին էլ ջրի շիթը գլորում է, և նրանք հրաժարվում են բանանը վերցնելու փորձերից:
Ջուրն անջատում են, իսկ թրջված կապիկներից մեկին փոխում են ուրիշ մեկով՝ չոր կապիկով: Հենց սա մտնում է տարածք, մյուս կապիկներն սկսում են ամեն ինչ անել, որ նրան թույլ չտան աստիճանի վրա բարձրանալ, որ ջուրը նրան էլ չգլորի: Նոր կապիկը չի հասկանում՝ ինչ է կատարվում: Նա միայն տեսնում է, որ ցեղակիցները իրեն թույլ չեն տալիս քաղցրեղենին տիրանալ: Նա փորձում է ուժով առաջ գնալ, կռվում է: Բայց ինքը մենակ է, և մնացած չորս կապիկները հաղթում են:

Սենյակից էլի մի թրջված կապիկ են հանում ու ներս թողնում էլի մի չորի: Հենց սա հայտնվում է, նախորդը, ենթադրելով, որ նորերին պետք է հենց այդպես դիմավորել, հարձակվում է նրա վրա, խփում, էնպես որ սա նույնիսկ չի հասցնում աստիճանն ու բանանը տեսնել: Այս կապիկն արդեն խաղից դուրս է:

Հետո մնացած թրջված կապիկներին էլ հերթով փոխում են չորերով: Եվ ամեն անգամ նոր եկածին խփում են, հենց սա սենյակ է մտնում: Ամեն անգամ եկածի ընդունելությունն ավելի ու ավելի դաժան է դառնում: Կապիկները խմբով հարձակվում են մտնողի վրա, ասես ջանում են կատարելագործել նորեկին դիմավորելու ծեսը:

Եվ այսպես, բանանը դեռ աստիճանի վրա է, բայց հինգ չոր կապիկները, մշտական կռիվներից շշված, նույնիսկ չեն մտածում դրան մոտենալու մասին: Հիմա նրանց միակ հոգսը մի նոր կապիկի մուտքը հսկելն է, որ անմիջապես հարձակվեն վրան:

Այս փորձն անցկացվել է ձեռնակություններում մարդկանց խմբային վարքը ուսումնասիրելու համար:

Իլլիչի օրենքը

Իվան (Այվան) Իլլիչը ռուսական հրեաների ընտանիքից սերած ավստրիական կաթոլիկ հոգևորական է: Նա երկար ժամանակ ուսումնասիրել է երեխաների վարքը և մի շարք գործեր հրատարակել, որոնց թվում են «Դպրոցից ազատագրումը» և «Ստեղծագործ անգործությունը»:

Տարբեր մշակույթների ծանոթ և անսասան ճշմարտություններ ժխտող այս մտածողը հրաժարվել է կոչումներից ու 1960 թվին Կուերնավակայում (Մեքսիկա) ստեղծել Միջմշակութային փաստագրման կենտրոն (CIDOC), որ զբաղվում է արդյունաբերական հասարակության քննադատական վերլուծությամբ: Իր՝ «Հեղափոխության համար քաղաքական ռազմավարություն հարկավոր չէ» հոդվածում նա մարդկանց կոչ է անում ստեղծելու արտադրական տարածքներ՝ հենվելով նախ և առաջ տոնական մթնոլորտի ապահովման վրա: Նա համոզված է, որ այդպիսի մթնոլորտից, ոչ թե արտադրողականության բարձրացումից խթանված մարդն ինքը կգտնի արտադրության իր մասնակցության լավագույն ձևը:

Գրքերից ու ելույթներից բացի Իվան Իլլիչը հատկապես հայտնի է իր անունը կրող իր իսկ ձևակերպած օրենքի շնորհիվ: Նա հաշվի է առնում շատ տնտեսագետների՝ մարդու գործունեության արդյունավետությանը նվիրված եզրակացությունները: Այս օրենքը կարելի է այսպես ձևակերպել. «Եթե անվերջ կիրառենք ֆորմուլան, որն աշխատում է, վաղ թե ուշ դա կսկսի գործել»: Տնտեսագիտության մեջ ընդունված է հաշվել, որ գյուղատնտեսական աշխատանքների կրկնապատկումը բերում է ցորենի բերքի կրկնապատկմանը: Փորձը ցույց է տալիս, որ դա գործում է, բայց մինչև որոշակի պահը:
Որքան մոտ է սահմանը, այնքան աշխատանքի ավելացումը պակաս արտադրողական է: Իսկ եթե սահմանն անցնենք, կստանանք արտադրողականության բացասական աճ: Այս օրենքն օգտագործելի է ինչպես ձեռնարկությունների, այնպես էլ մարդու համար: Մինչև 1960-ականները ստախանովյան շարժման կողմնակիցները համարում էին, որ աշխատանքի արտադրողականության բարձրացման համար հարկավոր է ճնշումն աշխատողի վրա ուժեղացնել: Իրականում դա ճիշտ է միայն մինչև այն պահը, որ սահմանված է Իլլիչի օրենքով: Ցանկացած նոր ճնշում անարտադրողական, այսինքն՝ վնասակար դուրս կգա:

Վախը
1949 թվին Էգաշ Մունիշը Նոբելյան մրցանակ ստացավ գլխուղեղի հետ կապված ֆիզիոլոգիայի և բժշկության ասպարեզում իր գործերի համար: Նա բացահայտեց, որ գլխուղեղի ճակատային մասի հեռացումը մարդուն զրկում է վախի զգացումից: Միայն թե այդ մասը առանձնահատուկ գործառույթ ունի: Նա մեզ օգնում է պատկերացնելու իրադարձությունների զարգացման հնարավոր տարբերակները: Այս բացահայտումը թույլ տվեց գիտակցելու, որ մեր վախերն առաջանում են մտքով ապագա տեղափոխվելու ընդունակությունից: Դրա շնորհիվ զգում ենք հնարավոր վտանգը և վերջին հաշվով գիտակցում ենք, որ մի օր մեռնելու ենք:

Սրանից Էգաշ Մինուշը եզրակացրեց, որ.... ապագայի մասին չմտածելը նվազեցնում է մեր տագնապը:

Բռնություն
Մինչ Արևմուտքից վերաբնակիչների գալը հյուսիսամերիկյան հնդկացիներն ապրում էին չափավորության սկզբունքի վրա հիմնված հասարակությունում: Բռնություն, իհարկե, կար, բայց ծիսական բնույթ ուներ: Հնդկացիները չափից դուրս ծնելիություն չունեին և, որպես դրա հետևանք, գերբնակեցման հետ կապված պատերազմներ չէին անում: Ցեղախմբի ներսում բռնությունը ծառայում էր որպես ցավին դիմանալու կամ անելանելի իրադրությունից ելք գտնելու միջոցով քաջություն դրսևորելու միջոց: Միջցեղային հակամարտություններն առաջանում էին հիմնականում որսի տարածքների բաժանման պատճառով և հազվադեպ էին վերաճում զանգվածային սպանության ու ջարդի: Բավարար էր ցույց տալ, որ դու կարող էիր առաջ գնալ, եթե ուզեիր: Հատկապես բռնություն կիրառելը համարվում էր անմիտ բան: Շատ երկար ժամանակ հնդկացիները նվաճողների դեմ պայքարում էին ընդամենը ուսին նիզակով թակելով՝ ի նշան, որ կարող էին խոցել օտարականին, եթե ուզեին: Իսկ նրանք սրանց պատասխանում էին հրազենով: Չէ՞ որ բռնության չանցնելու համար հարկավոր է ամենաքիչը աստված լինել:

Մատրյոշկաները
Եթե էլեկտրոնը գիտակցություն ունենար, գլխի կընկնե՞ր, որ ներառված է շատ ավելի խոշոր ամբողջականության մեջ, քան ատոմն է: Ատոմը կարո՞ղ էր հասկանալ, որ ինքը ինչ-որ շատ ավելի մեծ բանի մաս է, քան մոլեկուլն է: Կարո՞ղ էր մոլեկուլը հասկանալ, որ գտնվում է շատ ավելի մեծ մի բանի, օրինակ՝ ատամի մեջ: Իսկ ատամն ընդունա՞կ է ենթադրելու, որ ինքը մարդու բերանի մասն է կազմում: Առավել ևս՝ էլեկտրոնը կարո՞ղ է գիտակցել, որ ինքը մարդու մարմնի անսահմանորեն փոքր մասնիկն է:

Երբ մեկն ասում է, որ հավատում է Աստծուն, նման է պնդմանը, թե՝ «Ես՝ փոքրիկ էլեկտրոնս, հավակնություն ունեմ մոլեկուլի մասին գիտելիքի»: Եթե մեկն ասում է, թե ինքն աթեիստ է, հավասար է հայտարարության, թե՝ «Ես՝ փոքրիկ էլեկտրոնս, համոզված եմ, որ իմ իմացածից ավելի վեր ու ավելի մեծ բան չկա»:

Բայց ի՞նչ կասեին թե՛ հավատացյալները, թե՛ աթեիստները, եթե իմանային, թե ամեն ինչ որքա՛ն ավելի մեծ ու բարդ է, քան կարող է պատկերացնել իրենց երևակայությունը: Ի՞նչ աստիճանի ցնցված կլիներ էլեկտրոնը, եթե իմանար, որ ինքը ոչ միայն ատոմի, մոլեկուլի,

ատամի ու մարդկանց մասնիկ է, այլև, որ իրենք՝ մարդիկ մոլորակի, արեգակնային համակարգության, տիեզերքի մասն են և էլի ինչ-որ անհամեմատ ավելի մեծ բանի, ինչի համար մենք դեռ անվանում չունենք: Մենք մի մասն ենք մատրյոշկայի, որի մասշտաբները գերազանցում են մեր հասկացողությունը:

Դրա համար ինձ իրավունք եմ վերապահում ասելու, որ մարդկանց հնարած Աստծո գաղափարն ընդամենը վարագույր է: Դրանով պաշտպանում են իրենց դժվար հասկանալի մի բանից՝ այն բանի անսահման բարդ լինելուց, որը, հնարավոր է, գտնվում է իրենց վրա:

Պարտվածների հիշողությունը
Մենք անցյալի մասին գիտենք միայն հաղթողների մեկնաբանությամբ: Տրոյայի մասին գիտենք միայն այն, ինչ պատմում են հույն պատմաբանները: Կարթագենի մասին նույնպես իմանում ենք հույներից, գալլերի մասին՝ Հուլիոս Կեսարի հիշողություններից: Ացտեկների ու ինկերի մասին տեղեկանում ենք նրանց իրենց հավատին ուժով դարձնելու եկած միսիոներների ու կոնկիստադորների պատմություններից: Պարտվածների արժանիքներից քիչ է խոսվում և միայն նրա համար, որ մեծարեն սրանց ոչնչացնել կարողացողներին:
Ո՞վ կհանդգնի խոսել «պարտվածների հիշողությունից»: Պատմական գրքերը վարժեցնում են մտածելու, որ եթե քաղաքակրթությունն անհետացել է, ուրեմն, համաձան Դարվինի տեսության, վատ հարմարվողականություն է ունեցել:

Բայց իրադարձությունների ուշադիր ուսումնասիրությունից հասկանում ես, որ, որպես կանոն, առավել քաղաքակրթվածները զոհվում են նրանց ձեռքից, ովքեր առավել դաժան են եղել: Զոհված քաղաքակրթությունների հարմարվողականության միակ «թերությունն» այն է, որ նրանք հավատացել են. Կարթագենը՝ խաղաղության պայմանագրի պահպանմանը. Տրոյան՝ նվերի անկեղծությանը (գովենք Ոդիսևսի խորամանկությունը՝ ամբարիշտություն, որ գիշերվա քողի տակ նախճիրի բերեց):

Ամենավատն այն է, որ հաղթողները ոչ միայն ոչնչացնում են իրենց զոհերի տարեգրությունն ու նյութական մշակույթը, այլև աղավաղում են նրանց հիշողությունը: Իրենց ներխուժումը Կրետե և մինոսյան հոյակապ մշակույթն ավիրելն արդարացնելու համար հույները հորինեցին առասպելը Թեսևսի մասին, ով հաղթում է ցուլի գլխով հրեշին, որը կույսերի էր խժռում: Հռոմեացիները պնդում էին, որ կարթագենցիները մարդկային զոհեր էին մատուցում Մոլոխ աստծուն, ինչը, արդեն գիտենք, որ ամենևին էլ այդպես չէր:
Ո՞վ երբևէ կհամարձակվի խոսել պարտվածների հզորության մասին: Միայն աստվածները, ում հայտնի է հրով ու սրով ոչնչացված քաղաքակրթությունների գեղեցկությունն ու փխրունությունը:

Առնետների հիերարխիան
Առնետների վրա փորձ են արել:

Դիդյե Դեզորը՝ Նանսի քաղաքի՝ վարքային բնագիտության լաբորատորիայի մի գիտնական, վեց առնետի տեղավորել է մի վանդակի մեջ, որ ռումնասիրի նրաց լողալու ընդունակությունը: Վանդակից միայն մի ելք կար՝ դեպի լողավազան: Կերամանին հասնելու համար հարկավոր էր լողալով անցնել այդ ավազանը: Շուտով պարզվեց, որ ոչ բոլոր

առնետներն են գնում կերի հետևից: Դերերը հետևյալ կերպ են բաշխվում. երկու ստրուկ, երկու շահագործող, մեկ անկախ լողորդ և մեկ քավության նոխազ:

Երկու ստրուկները լողում էին՝ կեր բերելու: Հենց վերադառնում էին վանդակ, երկու շահագործողներն այնքան էին սրանց ծեծում ու գլուխները սուզում ջրի մեջ, մինչև որսը բաց թողնեին: Ստրուկներն իրենց բաժինն ստանում էին միայն տերերին կերակրելուց հետո: Շահագործողները երբեք կուշտ ուտելու համար լողալով չէին անցնում ավազանը: Նրանց համար հերիք էր լողորդներին քոթակելը:

Անկախ լողորդը բավականին ուժեղ էր և չէր ենթարկվում շահագործողներին: Քավության նոխազը ո՛չ լողալ էր կարողանում, ո՛չ շահագործողներին վախեցնել: Նա պարզապես կռվի ժամանակ թափված փշուրներն էր հավաքում:

Խմբի նույնատիպ կառուցվածք՝ երկու ստրուկ, երկու շահագործող, անկախ մեկ լողորդ և մեկ քավության նոխազ, առաջացան փորձի բոլոր քսան վանդակներում:

Որ հիերարխիայի մեխանիզմն ավելի լավ պատկերացնի, Դիդյե Դեզորը նույն վանդակի մեջ տեղավորեց վեց շահագործողների: Նրանք ամբողջ գիշեր կռվեցին, իսկ առավոտյան դերերն արդեն բաշխված էին սովորական սխեմայով՝ երկու շահագործող, երկու ստրուկ, մեկ անկախ լողորդ և մեկ քավության նոխազ:

Վեց ստրուկների, վեց անկախ լողորդների և վեց քավության նոխազների վրա փորձը նույն արդյունքը տվեց:

Այս փորձերի ևս մի արդյունք Նանսիի գիտնականները պարզեցին՝ բացելով փորձարկվողների գանգերը և վերլուծելով նրանց ուղեղի վիճակը: Սթրեսի ամենակործանիչ ազդեցությանը ենթարկվել էին ոչ թե քավության նոխազների, ոչ թե ստրուկների ուղեղները, այլ շահագործողներինը: Նրանք վախեցած են եղել, որ ստրուկները կդադարեն իրենց ենթարկվել:

Ընտրություն

Ապագա լրտեսների հավաքագրելիս ԿՀՎ-ն՝ Կենտրոնական հետախուզական վարչությունը, կիրառում էր նաև այսպիսի՝ շատ պարզ մի մեթոդ. թերթերում հայտարարություն էր տալիս, որ աշխատակազմ է հավաքվում: Ոչ մի մրցույթ, ոչ մի փաստաթուղթ, երաշխավորագիր կամ ինքնակենսագրություն: Բոլոր նրանց, ում հետաքրքրել է հայտարարությունը, հրավիրում էին առավոտյան յոթին լինել գրասենյակում: Սպասասրահում մի տեղի համար հարյուրավոր թեկնածուներ էին հավաքվում: Նրանք սպասում էին մի ամբողջ ժամ, բայց ոչ ոք չէր մոտենում: Ժամանակն անցնում էր: Գլորվում էր ևս մեկ ժամ: Ամենաքիչ համառները հոգնում էին ու, զամացած, թե ինչու են իրենց իզուր անհանգստացրել, հեռանում էին՝ դժգոհության արտահայտություններով: Ժամը տասներեքի կողմերը թեկնածուների կեսից ավելին դուռը շրխկացրած էր լինում: Տասնյոթի կողմերը մնում էր առավոտյան եկածների քառորդ մասը: Կեսգիշերին մոտ մնում էր մեկ-երկու մարդ:

Նրանց էլ մեխանիկորեն ընդունում էին աշխատանքի:

Մահը
Մարսելի՝ Տարո բախտաթղթերի մեջ անանուն օղաթոկի մեջ պատկերված է «մահ-վերածնունդը»՝ մարմնագույն կմախք, որ հնձում է սև արտը: Նրա աջ ոտքը խրված է հողում, իսկ ձախով հենվել է կնոջ գլխի: Կմախքը շրջապատված է երեք ձեռքերով, մի ոտքով և երկու սպիտակ ոսկորներով: Աջից ժպտացող մի գլուխ է՝ թագով պսակված: Հողից դուրս են գալիս դեղին ու երկնագույն ծիլեր:

Բախտաթղթին պատկերված մանգաղի սիմվոլիկան կապվում է լատինական ալքիմիական V.I.T.R.I.O.L բանաձևի հետ (Visita Interiora Terrae Rectifi cando Invenies OperaeLapidem՝ «հասիր երկրի միջուկին և մաքրվելով կգտնես գաղտնի (փիլիսոփայական) քարը»):

Մանգաղը նրա համար է, որ մաքրես հողը, կտրես այն, ինչ դուրս է գալիս դրա տակից: Դրանից հետո սև հողից դուրս կգան երիտասարդ շիվեր:
«Մահը» մի քարտ է, որ նշանակում է շատ խիստ փոփոխությունների ժամանակաշրջան: Դրա համար էլ վախեցնում է: Դա նաև նշանակում է օղակների համակարգում շրջադարձային պահ:

Նախորդ տասներկու օղակները բերում էին միայն ճշմարտության ճանապարհին, առաջարկում էին մի շարք մանր հանելուկներ, բայց, սկսած տասներեքերորդից, բացվում է դեպի մեծ գաղտնիքը տանող ճանապարհը: Արդեն հանդիպում են Երկնային Արքայության խորհրդանիշերով՝ ամպերով ու հրեշտակներով թղթեր: Ավելի մոտ է դառնում բարձրագույն գիտելիքներին առնչվելու հնարավորությունը:

Ցանկացած նախաձեռնություն մեռնել-հառնելու փուլ ունի: Էզոտերիկ իմաստով դա նշանակում է խորը փոփոխություններ, որոնք կերպարանափոխում են մարդուն: Անկատար արարածը պիտի կործանվի. միայն այդպես նա կարող է հարություն առնել:

Սամադխի
Բուդդիզմում կա «սամադխի» հասկացությունը: Որպես կանոն մեր մտքերն անկանոն են հոսում: Մոռանում ենք գործի մասին, որով զբաղված ենք՝ մտորելով նախորդ օրը պատահածի մասին կամ փորձելով ծրագրել հաջորդ օրը: Սամադխիի մեջ, լրիվ կենտրոնանալով նրա վրա, ինչով զբաղված եք հենց այս րոպեին, դուք սեփական հոգու վրա իշխանություն եք ձեռք բերում: Սանսկրիտից թարգմանած՝ «սամադխի» նշանակում է «գիտակցության կենտրոնացում մի ուղղությամբ»:

Սամադխիի վիճակում զգայականության փորձը ոչ մի նշանակություն չունի: Մարդը կորցնում է կապը նյութական աշխարհի, այն ամենի հետ, ինչին սովոր է: Մնում է միայն մի բանի հանդեպ ձգտումը՝ զարթոնքի (նիրվանայի):

Այս վիճակին տանում են երկու աստիճաններ:

Առաջին աստիճանը՝ «Սամադխի՝ առանց կերպարի»: Հարկավոր է պատկերացնել, որ քո գիտակցությունը երկնքից էլ պարզ է: Ցանկացած ամպ՝ սև, գորշ, ոսկեգույն, մեր մտքերն են, որ ստվերում են երկինքը: Ամպերն անընդհատ հայտնվում են, բայց հարկավոր է դրանք քշել այնքան, մինչև երկինքը մաքրվի:

Երկրորդ աստիճանը՝ «Սամադխի՝ առանց ուղղության»: Դա այն վիճակն է, երբ չես ուզում հետևել այս կամ այն ճանապարհին և էլ ոչ մի ցանկություն չունես: Հարկավոր է՝ քեզ հարթ մակերևույթին դրված գունդ պատկերացնես, որ անշարժ է մնում, չնայած կլոր է և կարող է գլորվել:

Տոլտեկների չորս համաձայնագիրը

Դոն Միգել Ռուիսը ծնվել է Մեքսիկայում: Նրա մայրը «կուրանդեր» էր (հեքիմ), իսկ պապը՝ «նագվալ» (շաման): Նա բժշկական կրթություն է ստացել, դարձել վիրաբույժ, բայց, վթարվելով ապրել է NDE (մահվան մոտիկության փորձ) կամ EMI (մահվան վերահաստության փորձ): Դրանից հետո որոշել է տիրապետել շամանների իմաստությանը և դարձել նագվալ Արծվի ասպետի գծով, ուր սերնդեսերունդ փոխանցվում է հին տոլտեկների ուսմունքը: «Տոլտեկների չորս համաձայնագիրը» գրքում Դոն Միգել Ռուիսը շարադրում է կյանքի կանոնները՝ իր ուսմունքի ամփոփումը չորս օրենքների տեսքով, որոնք թույլ են տալիս ազատվելու հասարակության պարտադրած պայմանականություններից և ապագայի նկատմամբ վախից:

«Առաջին համաձայնագիր. ձեր խոսքը պիտի անբիծ լինի: Ուղիղ ու ազնվորեն խոսեք: Ասացեք միայն այն, ինչ իրոք մտածում եք: Խուսափեք ասելուց այնպիսի բաներ, որ կարող են օգտագործվել ձեր դեմ կամ բամբասանքի առիթ տալ: Բառը գործիք է, որ կարող է վնասել: Գիտակցեք դրա ուժը և ենթարկեք ձեզ: Երբեք մի՛ ստեք և մի՛ զրպարտեք:

Երկրորդ համաձայնագիր. ոչինչ ձեզ վրա մի՛ վերցրեք: Այն ամենը, ինչ մարդիկ ասում կամ անում են, նրանց սեփական իրականության, անձնական վախերի, զայրույթի, երևակայության անդրադարձն է: Օրինակ՝ եթե որևէ մեկը ձեզ վիրավորում է, իր խնդիրն է, ոչ թե ձերը: Մի՛ վիրավորվեք և ձեր գործողությունները դրա պատճառով կասկածի մի՛ ենթարկեք:

Երրորդ համաձայնագիր. ենթադրություններ մի՛ արեք: Նախօրոք իրադարձությունների տհաճ զարգացում մի երևակայեք, թե չէ ինքներդ կհավատաք նրան, ինչ երևակայել եք: Օրինակ՝ եթե նա, ում սպասում եք, ուշանում է, սկսում եք մտածել, թե մի բան է պատահել: Եթե չգիտեք՝ ուր է այդ մարդը, հետաքրքրվեք: Թույլ մի՛ տվեք ձեր վախերն ու հնարածները դառնան համոզմունք:

Չորրորդ համաձայնագիր. աշխատեք՝ ինչ անում եք, լավ անեք: Ոչ ոք պարտավոր չէ կարողություններից վեր բան անել, բայց յուրաքանչյուրը պիտի ջանա անելիքը հնարավորինս լավ անել: Եթե դուք անհաջողություն եք ունեցել, մի՛ դատապարտեք և մի՛ մեղադրեք ձեզ, մի տրտմեք, որ ինչ-որ բան չեք արել, աշխատեք արդյունավետ օգտագործել ձեր հնարավորությունները: Ձեր նկատմամբ ներողամիտ եղեք: Հաշտվեք նրա հետ, որ կատարյալ չեք և որ ոչ միշտ եք հաղթող»:

Դատարկության ուժը

Մարդը միշտ վախեցել է դատարկությունից: Դատարկությունը, որ հին հռոմեացիները կոչում էին «Horror Vacui», հին գիտնականները համարում էին սարսափի քվինտէսենցիան (հինգերորդ տարրը-Հ.Ղ.): Դեմոկրիտն առաջիններից էր, որ խոսեց դատարկության գոյության մասին: Ք.ա. 5-րդ դարում նա գրում է, որ մենք մատերիա ենք համարում այն, ինչ բաղկացած է

տարրերից, որ ճախրում են դատարկության մեջ: Արիստոտելը ժխտում է այս տեսությունը՝ պնդելով, որ «բնությունը վախենում է դատարկությունից»: Միայն 1643 թվականին իտալացի Էվանջելիստա Տորիչելին, Գալիլեյի գաղափարներից ոգեշնչված, մի բարդ փորձի միջոցով ապացուցեց դատարկության գոյությունը:

Նա 1,30 մ երկարությամբ խողովակը սնդիկ լցրեց և կնքված ծայրով իջեցրեց նույնպես սնդիկ լցրած չանի մեջ: Նա նկատեց, որ խողովակում սնդիկի մակարդակն իջել է, իսկ վերևում դատարկ տարածություն է մնում: Դա բացարձակ դատարկ տարածություն է, քանի որ օդ չի մտնում: Այսպես, Տորիչելին առաջինն էր, որ ստեղծեց վակուումը: Փորձը կրկնելով՝ նա նկատեց, որ սնդիկի բարձրությունը խողովակում փոխվել է, և եկավ այն եզրակացությանը, որ չլցված տարածության ծավալը կախված է մթնոլորտային ճնշումից: Այդ փորձերի արդյունքում ստեղծվեց բարոմետրը՝ խողովակ՝ լցված սնդիկով, որի օգնությամբ հնարավոր է չափել մթնոլորտային ճնշումը:

1647 թվին գերմանացի ֆիզիկոս Օտտո ֆոն Գերիկեն ստեղծեց առաջին վակուումային պոմպը: Նա օդը հանեց երկու իրար կիպ կպած մետաղական կիսագնդերից և ապացուցեց, որ դրանք իրարից չեն կարող բաժանել տասնվեց ձիեր՝ ութական ձիեր հակառակ կողմեր քաշելով: Նա նաև ապացուցեց, որ վակուումն ունի մետաղի երկու կտոր իրար հետ պահելու ուժ:

Հնդիկները դատարկությունը համարում են փիլիսոփայական կարևորագույն հասկացությունը: Բացարձակ դատարկության հասնելը բարձրագույն նպատակն է, որին ձգտում է իմաստունը: Նրանք հավատում են նաև, որ անիվը, որի անվակունդերը միացված են առանցքին, պտտվում է շնորհիվ նրա, որ անվակունդերի ու առանցքի արանքում դատարկություն է:

Պարոն Պերիշոնի բարդույթը

19-րդ դարի ֆրանսիացի գրականագետ Էժեն Լաբիշն իր «Պարոն Պերիշոնի ճանապարհորդությունը» պիեսում նկարագրում է մարդու՝ առաջին հայացքից անբացատրելի, միաժամանակ զարմանալիորեն տարածված մի վարքագիծ ուրիշ մարդկանց նկատմամբ: Խոսքը երախտամոռության մասին է:

Պարոն Պերիշոնն իր ծառայի հետ գնում է Մոնբլան, որ տրվի լեռնագնացության հաճույքին: Տանը փոքրիկ շալի մեջ փաթաթված նրան է սպասում դուստրը: Վերադառնալով պարոն Պերիշոնը նրան ներկայացնում է երիտասարդներին, ում հանդիպել էր լեռներում: Դրանցից մեկը մի երիտասարդ էր, ում կյանքն ինքը՝ Պերիշոնը փրկել էր, երբ սա քիչ էր մնում անդունդն ընկներ: Երիտասարդը տենդագին պնդում էր, որ հիմա կենդանի չէր լինի, եթե պարոն Պերիշոնը չլիներ:

Ծառան հիշեցնում է տիրոջը, որ հարկավոր է ներկայացնել նաև երկրորդ հյուրին՝ նրան, ով Պերիշոնի կյանքն է փրկել, երբ սա ընկնում էր ժայռաձեղքը: Պարոն Պերիշոնն ուսերն է վեր քաշում ու հայտարարում, որ իրեն սպառնացող վտանգն այնքան էլ մեծ չէր: Եվ իր փրկչին ներկայացնում է որպես աներես դուրսպրծուկ: Նա նվազեցնում է երկրորդ երիտասարդի արժանիքները և իր աղջկան դրդում է ուշադրության արժանացնելու առաջին հիասքանչ

երիտասարդին: Քանի գնում, այնքան ավելի էր Պերիշոնին թվում, թե երկրորդ երիտասարդի օգնությունն իրեն ամենևին էլ պետք չէր: Ի վերջո սկսում է կասկածել՝ արդյո՞ք իրոք ընկնում էր անդունդը:

Էժեն Լաբիշը պարզորոշ ցույց է տալիս, թե որքան տարօրինակ է մարդն իրեն պահում, որ քիչ է՝ շնորհակալության ու երախտագիտության զգացում չունի, դեռ մի բան էլ դատապարտում է իրեն օգնության եկածներին: Հնարավոր է՝ դա պատահում է ինչ-որ մեկին պարտական չլինելու համար: Եվ ընդհակառակը, սիրում ենք նրանց, ում ինքներս ենք օգնել, պարծենում ենք մեր լավ արարքներով ու համոզված ենք, որ նրանք, ում մենք բարություն ենք արել, պիտի ողջ կյանքում երախտապարտ լինեն:

Հաղթանակը

Ուսումնական համակարգերի մեծ մասը սովորեցնում է պայքարել պարտության դեմ: Դպրոցում երեխաներին սովորեցնում են, որ իրենց համար դժվար է լինելու աշխատանք գտնելը, նույնիսկ եթե դիպլոմ ստանան: Տանն աշխատում են նախապատրաստել այն մտքին, որ ամուսնությունների մեծ մասն ավարտվում է ամուսնալուծությամբ, և որ զույգերի մեծ մասն ի վերջո հիասթափություն է միայն բերում:

Ապահովագրական գործակալություններն ընդհանուր հոռետեսությունն են սատարում: Նրանց կրեդոն է՝ դուք քիչ հնարավորություն չունեք ավտովթարի ենթարկվելու, հրդեհի կամ ջրհեղեղի զոհ դառնալու: Այնպես որ, հեռատես եղեք, ապահովագրվեք:

Զանգվածային լրատվամիջոցները լավատեսներին զօրուգիշեր հիշեցնում են, որ մարդիկ ամեն տեղ անպաշտպան են: Լսե՛ք գուշակներին. բոլորը խոսում են միայն Ապոկալիպսիսից կամ պատերազմից:

Համաշխարհային պարտություն, տեղային պարտություն, անձնական պարտություն… Միայն նրանց ձայնն է լսվում, ով խոսում է անուրախ ապագայից: Ո՞ր մի մարգարեն կհամարձակվի հայտարարել, թե ապագայում ամեն ինչ ավելի ու ավելի լավ է լինելու: Իսկ երբ խոսքը իր՝ մարդու մասին է, ո՞վ կհամարձակվի երեխաներին դպրոցում սովորեցնել, թե ինչ պիտի անեն, որ լավագույն դերի համար «Օսկար» ստանան: Ինչպե՞ս արձագանքեն՝ հաղթած լինելով համաշխարհային մրցաշարում: Ի՞նչ անեի, եթե փոքրիկ ձեռնարկությունը վերածվել է միջազգային ընկերության:

Արդյո՞ւնքը: Երբ մարդ հաղթանակ է տանում, զրկվում է ուղղվածությունից և հաճախ այնքան շլացած է լինում, որ անմիջապես ինքն է կազմակերպում սեփական պարտությունը, որ վերադառնա իրեն ծանոթ՝ «նորմալ» իրադրություն:

Շշնջացողը

Գոյություն ունի ոչ շատ տարածված մի մասնագիտություն՝ շշնջացող: Շշնջացողներին վարձում են ձիաբուծարանները, որ սրանք հանգստացնեն ձիերին, հատկապես վարգողներին, որոնց նյարդերը թուլացած են: Ձիու ճիշտ զարգացմանը հաճախ խանգարում է այն, որ նրան թույլ չեն տալիս հետաքրքրվել աշխարհով:

Ամենից շատ նրան անհանգստացնում են աչքակապերը՝ կաշվե փոքրիկ կտորներ, որոնցով փակում են աչքերը, որ ձին շուրջը չնայի: Որքան կենդանին խելացի է, այնքան դժվար է տանում շուրջբոլորը կատարվողը տեսնելու հնարավորությունից իրեն զրկելը: Շշնջացողը ցածրաձայն խոսում է ձիու հետ, շշնջում նրա ականջին՝ նրա հետ առանձնահատուկ՝ նրան պարզապես օգտագործելուց տարբերվող հարաբերություններ հաստատելով: Ձին կարծես մարդու հետ շփման նոր միջոց է հայտնագործում և արդեն կարող է ներել նրան, որ սահմանափակում է իր տեսադաշտը:

Տասը պատվիրանները

Անկախ արդարադատություն ներդնելը հեշտ չի եղել: Երկար ժամանակ արքաներն ու սպարապետներն էին դատ իրականացնում: Նրանք ընդունում էին այն որոշումը, որն իրենց էր ձեռնտու և ոչ ոքի պարտավոր չէին հաշիվ տալու: Երբ Մովսեսն ստացավ Տասը պատվիրանները (մոտ 1300 տարի Ք.ա.), ի հայտ եկավ տեղեկագրի համակարգը, ուր օրենքները ոչ թե պաշտպանում էին որևէ մեկի քաղաքական շահերը, այլ տարածվում էին բոլոր մարդկանց վրա:

Բայց պետք է նշենք, որ Տասը պատվիրաններն ընդամենը արգելքների ցուցակ չէ, թե չէ կինչեին այսպես. «Դու չպետք է սպանես», «Դու չպետք է գողանաս» և այլն: Պատվիրանները, սակայն, գրված են ապառնի ժամանակով՝ «Դու չես սպանելու», «Դու չես գողանալու»: Դրա համար էլ որոշ մեկնիչներ համարում են, որ սա ոչ այնքան օրենքների ժողովածու է, որքան մարգարեություն: Մի օր դու այլևս չես սպանելու, որովհետև հասկանալու ես, որ սպանելն անիմաստ է: Այլևս չես գողանալու, որովհետև ապրելու համար դրա կարիքը չես ունենալու: Եթե Տասը պատվիրաններն ընդունենք որպես մարգարեություններ, կտեսնենք, որ դրանցում գիտակցության զարգացման ընթացք կա, որի արդյունքում զանցանքների համար պատիժ պետք չի լինում, քանի որ էլ ոչ ոք չի ուզում վատ բան անել:

Մերֆիի օրենքները

1949 թվին ամերիկացի ինժեներ, կապիտան Էդուարդ Ա. Մերֆին ամերիկյան BBC-ի պատվերով աշխատում էր MX 981 նախագծի վրա: Նա պետք է ուսումնասիրեր՝ ինչ է զգում օդաչուն վթարի ժամանակ: Գիտափորձի համար հարկավոր էր տասնվեց հաղորդիչ տեղավորել օդաչուի մարմնի վրա: Գործը հանձնարարված էր տեխնիկին, ով գիտեր, որ ամեն հաղորդիչ հնարավոր է տեղադրել երկու դիրքով՝ ճիշտ և սխալ: Տեխնիկը բոլոր հաղորդիչները սխալ էր տեղադրել: Այդ ժամանակ էլ Մերֆին արտասանեց «If anything can go wrong it will» արտահայտությունը («Եթե մի բան կարող է չստացվել, չի ստացվի»): Այս հոռետեսական օրենքը, որ կոչվում է նաև «ստորության օրենք» կամ «բուտերբրոդի օրենք» (որովհետև բուտերբրոդը միշտ կարագոտ երեսով է գետնին ընկնում), այնպիսի հեղինակություն ձեռք բերեց, որ սկսեցին նույն սկզբունքով ի հայտ գալ Մերֆիի ուրիշ օրենքներ ևս, որ նման են ասացվածքի: Ահա դրանցից մի քանիսը.

«Եթե ամեն ինչ հաջող է ընթանում, ուրեմն մի բան աչքաթող եք արել»:

«Ամեն մի լուծում բերում է նոր խնդիրներ»:

«Այն ամենը, ինչ բարձրանում է, ի վերջո նաև իջնում է»:

«Կողքի հերթը միշտ քոնից արագ է առաջ շարժվում»:

«Իսկապես հետաքրքիր տղամարդիկ ու կանայք արդեն մեջ-մեջ են արված, իսկ եթե՝ ոչ, ուրեմն մի գաղտնի պատճառ կա»:

«Եթե մի բան շատ լավ է, ճշմարիտ լինելու համար, ուրեմն՝ ամենայն հավանականությամբ, այդպես էլ կա»:
«Կնոջը տղամարդու մեջ հրապուրում են հատկապես այն հատկանիշները, որոնք մի քանի տարի անց նա տանել չի կարողանում»:
«Տեսությունն այն է, երբ բան դուրս չի գալիս, բայց գիտես, թե ինչու: Գործնականն այն է, երբ բան չի ստացվում, և չգիտես՝ ինչու: Երբ տեսությունը հաստատվում է գործնականով, բան դուրս չի գալիս, և չես իմանում՝ ինչու»:

Թոմաս Հոբս
Թոմաս Հոբսը (1588-1679) անգլիացի գիտնական ու գրող է, ում համարում են քաղաքական փիլիսոփայության հայրը:

Մարդու մարմնի մասին գիտությունից նա նյութ է քաղում քաղաքագիտության համար՝ որ գրի «De cive» («Քաղաքացու մասին»), «De corpore», («Մարմնի մասին»), «De homini» («Մարդու մասին») եռագրությունը և, վերջապես, իր գլխավոր գործը՝ «Լևիաթան» տրակտատը:
Նա ենթադրում էր, որ կենդանիներն ապրում են ներկայով, իսկ մարդիկ ուզում են տիրանալ ապագային, որպեսզի հնարավորինս երկար ապրեն: Դրա համար էլ մարդուն հատուկ է ինքն իրեն շրջապատողներից կարևոր համարելը՝ այդպիսով նվազեցնելով ուրիշ մարդկանց նշանակությունը: Հենց այդ պատճառով մարդը կուտակում է իշխանություն (հարստություն, հեղինակություն, ընկերներ, ենթականեր) և աշխատում է յուրացնել նրանց ժամանակն ու հնարավորությունները, ովքեր շրջապատում են իրեն:

Թոմաս Հոբսինն է, մասնավորապես, «Մարդը մարդուն գայլ է» հայտնի արտահայտությունը: Այս տրամաբանությամբ «մարդ» կենդանին ջանում է խուսափել ուրիշ մարդկանց հետ հավասարությունից, ինչը բերում է բռնության ու պատերազմի: Հոբսը համարում էր, որ մարդուն ուրիշների վրա իշխելու ձգտումից հրաժարվել ստիպելու միակ միջոցը.... նրան համագործակցելու անհրաժեշտության առաջ կանգնացնելն է: Այսպիսով՝ անհրաժեշտ է Գերագույն ղեկավարի իշխանությունը (որ հաստատվի մարդկանց միջև կնքված պայմանագրի արդյունքում), որը կստիպի մարդուն իր մեջ զսպելու իր նմաններին ոչնչացնելու բնածին ձգտումը: Գերագույն ղեկավարը պիտի ունենա շատ լայն լիազորություններ, որ կասեցնի ցանկացած բախման զարգացում: Հոբսի տեսության համաձայն պարադոքսը հետևյալն է. անարխիան բերում է ազատության սահմանափակման. դա ձեռնտու է հզորներին: Միայն ուժեղ, կենտրոնացած, պարտադրաբար նշանակված իշխանությունը հնարավորություն կտա մարդուն ազատ լինելու: Դրանից բացի, հարկավոր է, որ այդ իշխանությունը լինի իր ենթակաների բարին կամեցող և սեփական եսասիրությունը հաղթահարած ղեկավարի ձեռքին:

Մայա հնդկանցիների աստղաբանությունը
Մայա հնդկացիները համարում էին, որ աշխարհը բաղկացած է երեք մասից՝ ստորգետնյա աշխարհ, երկիր և երկինք:

Երկիրը տափակ ու քառակուսի է: Դրա ամեն անկյունն իր գույնն ունի՝ հյուսիսը սպիտակ է, արևմուտքը՝ սև, հարավը՝ դեղին, իսկ արևելքը՝ կարմիր: Քառակուսու կենտրոնն էլ կանաչ է: Այս սալն ընկած է հսկայական կոկորդիլոսի մեջքին, որը լողում է ահռելի լողավազանում՝ ծածկված ջրաշուշաններով: Երկինքը նստած է վիթխարի գույնզգույն ծառերի կատարներին, որոնք աճում են սալի ամեն անկյունում: Երկնքի մեջտեղը պահում է երկրի կենտրոնում աճող կանաչ ծառը: Ըստ մայաների տասներեք երկինքներից և ինը ստորգետնյա աշխարհներից ամեն մեկը պահպանում է հատուկ աստվածություն: Ամեն աստված երկու հիպոսթազ ունի. Մեկը ստորգետնյա աշխարհի, մյուսը՝ երկնքի համար:

Մայաները հավատում էին, որ մահացածների հոգիները հետևում են արևի ճանապարհին, այսինքն՝ իջնում են ստորգետնյա աշխարհ, ինչպես արևը՝ մայրամուտին, որ առավոտյան բարձրից ծագի, բարձրանա հասնի երկնային աստվածություններին:

Մայա հնդկացիները հրաշալի մաթեմատիկոսներ էին: Նրանք հայտնագործել են զրոն ու հաշվարկման շատ հարմար քսանաչափ համակարգը, այսինքն՝ հաշվարկ՝ քսանյակներով (մենք օգտագործում ենք տասնաչափ համակարգ՝ հաշվարկ տասնյակներով): Դրանից զատ մայաները ականավոր աստղագետներ էին: Նրանք աստղացուցարաններ են կառուցել, հայտնաբերել են մոլորակների մեծ մասը և եվրոպացիներից շատ առաջ կազմել լուսնային ու արևային օրացույցներ, այդ թվում «Հաբին»՝ կազմված երեք հարյուր վաթսունհինգ օրից:

Մայաների հոգևորականները օգտագործում էին այս օրացույցը ինչպես անցյալը, այնպես էլ ապագան իմանալու համար: Նրանք կանխատեսում էին խավարումները, զգուշացնում աղետների մասին:

Մայաները համարում էին, որ աշխարհը ծնվում և մեռնում է որոշակի պարբերականությամբ: Նրանց սուրբ գրքի՝ «Փոփոլ-Վուխի» համաձայն աշխարհը կծնվի ու կմեռնի չորս անգամ: Առաջին դարաշրջանը կավե մարդկանցն էր: Նրանք այնքան փափուկ ու հիմար էին, որ աստվածները բոլորին ոչնչացրին: Եկավ Երկրորդ՝ փայտե մարդկանց ժամանակաշրջանը: Սրանք սիրտ ու միտք չունեին, և աստվածները սրանց վերջը ջրհեղեղով տվեցին: Հետո հայտնվեցին երկու հերոս՝ Խուն-Ախպուն ու Շբալանկեն, որ կռվեն երկրային հրեշների դեմ: Նրանք եգիպտացորենից մարդիկ ծնեցին, որոնք, վերջապես գլխի ընկան, որ պիտի երկրպագեն երկնային շանթերին:

Մայաները նշել են տարեթիվը, երբ հաջորդ դարաշրջանը կավարտվի և աշխարհը վերջնականապես կմեռնի: Արևմտյան օրացույցով այդ տարեթիվը համընկնում է 2012-ին:

Աստված

Ըստ սահմանման Աստված ամենուր է և ամենակարող: Եթե նա կա, ուրեմն նա ամենուր է և ամեն ինչ կարող է: Բայց եթե նա ամեն ինչ կարող է, կարո՞ղ է արդյոք ստեղծել մի աշխարհ, ուր ինքը չի լինի և որտեղ ինքը ոչինչ չի կարող անել:

Ինկերի սոցիալական շարժունակությունը

Ինկերը հավատում էին ճակատագրի և կաստայի նախասահմանվածությանը: Նրանք մասնագիտական կողմնորոշման խնդիր չունեին. ամեն մարդու զբաղմունքը հայտնի էր լինում նրա ծնվելու պահից: Մշակի տղան անպայման մշակ էր դառնում, զինվորի տղան՝ զինվոր: Ապագայում սխալվելու ոչ մի հնարավորություն չթողնելով՝ կաստայի նշանը դնում էին մանկան հենց մարմնի վրա: Նորածնի՝ դեռ փափուկ գաղտունով գլուխը տեղավորում էին հատուկ փայտե շրջանակի մեջ, որ փոխում էր գանգի ձևը: Այսպես ինկերը հասնում էին նրան, որ մարդու գլուխն իր ապագա գործունեությանը համապատասխան ձև ընդունի: Թագավորի գլուխն, օրինակ, պիտի քառակուսի լինի: Գործողությունն անցավ էր՝ նման ատամնաշարը շտկելու հարմարանքը կրելուն: Փափուկ գանգը փայտե կաղապարի մեջ փոխում էր իր ձևը: Այդ ձևով նույնիսկ առանց հագուստի և շքախմբից լքված անգամ արքայորդիները մնում էին արքայորդիներ: Նրանց բոլորը ճանաչում էին, որովհետև միայն նրանք կարող էին քառակուսի թագը դնել: Զինվորների գանգին եռանկյուն ձև էին տալիս: Մշակների գլուխը սրացված էր լինում: Այսպիսով՝ ինկերի հասարակությունն անսասան դարձավ: Ոչ մի սոցիալական բարելավում: Անձնական հավակնությունները ոչ մի վտանգ չէին ներկայացնում գործող կարգերի համար, որովհետև ամեն մեկն իր գանգի ձևով մեկընդմիշտ կապված էր մնում իր հասարակական դիրքին ու մասնագիտությանը:

Աճ

Ժամանակին տնտեսագետները հաշվել են, որ առողջ հասարակությունն այն է, որ զարգանում է ընդարձակման ճանապարհով: Աճի մակարդակը այն ջերմաչափն էր, որ թույլ էր տալիս որոշելու ցանկացած կառույցի՝ պետության, ձեռնարկության, դրամական ծավալների առողջության աստիճանը: Բայց անընդհատ առաջ գնալ հնարավոր չէ: Հարկավոր է դադարեցնել ընդարձակումը, քանի դեռ դա չի անցել խելամտության սահմանը և չի տրորել հենց մեզ:

Տնտեսական ընդարձակումն ապագա չունի: Միայն մի վիճակ գոյություն ունի, որը կարելի է բավականին երկար ժամանակ պահել. ուժերի հավասարակշռությունը: Առողջ կարող է համարվել այն հասարակությունը, ազգը կամ աշխատավորը, որ շրջապատում ոչ ոքի չի ճնշում, և ինքն էլ ճնշված չէ իրեն շրջապատող միջավայրից: Մենք էլ չպիտի կռվենք, ընդհակառակը, պիտի ներառվենք բնության ու տիեզերքի մեջ: Միայն մի կարգախոս պիտի ունենանք. ներդաշնակություն:

Արտաքին և ներքին աշխարհների ներդաշնակ ներթափանցում:
Հենց այն օրը, երբ մեր հասարակությունը բնության նկատմամբ առավելություն կամ վախ չի զգա, մարդը հոմեոստազի մեջ կգտնվի իր տիեզերքի հետ: Նա կճանաչի հավասարակշռությունը: Էլ ապագայի ծրագրեր չի կազմի: Հեռահար նպատակներ չի դնի: Ուղղակի կապրի ներկայով:

Կենդանակերպ

Կենդանակերպի շրջանը չի համապատասխանում գիտությանը հայտնի աստղագիտական ոչ մի երևույթի: Դա այն ժամանակներում է կազմվել, երբ մշակույթների մեծ մասում Երկիրը համարվում էր աշխարհաստեղծման կենտրոնը: Նայելով երկնքում փայլող կետին՝ ուսումնասիրողը չգիտեր, թե հատկապես ինչ է տեսնում՝ աստղ, թե՞ գալակտիկա: Մարդիկ

չէին կարողանում չափել ո՛չ մինչև մոտ թվացող փոքր աստղը, ո՛չ մինչև հեռավոր հսկայական աստղն ընկած տարածությունը:

Բայց շրջանաձև դասավորված խորհրդանշանները հանդիպում են Բաբելոնում («Լուսնի տուն»), Եգիպտոսում, Իսրայելում, Պարսկաստանում, հույների մոտ («Կյանքի անիվը»), Տիբեթում, Չինաստանում («Կենդանիների շրջան»), փյունիկացիների մոտ («Իշտարի գոտի»), Հյուսիսային ու Հարավային Ամերիկաներում, Սկանդինավյան երկրներում և նույնիսկ վաղ քրիստոնեության մեջ (կենդանակերպի տասներկու նշանների փոխարեն տասներկու առաքյալներ):

Այնպիսի գիտնականները, ինչպիսիք են ժամանակակից աստղաբանության հիմնադիր Իոհան Կապլերը և նույնիսկ Նյուտոնը, հղում են արել կենդանակերպին՝ հորոսկոպներ կազմելիս և մարդու ծննդյան պահին աստղերի դիրքը ուսումնասիրելիս: Կենդանակերպը ոչ միայն մոգական նշանակություն ունի. սա խորհրդանշում է զարգացումը, ներկայացնում է աշխարհի զարգացման ալքիմիական նկարագիրը:

Առաջին նշանը՝ Խոյ: Սա սկզբնապատճառն է: Մեծ պայթյունի էներգիան է, որ խտանում և իր հետևից տանում է ուրիշ ուժերի:
Ցուլը՝ հզորության սիմվոլը, որ առաջացել է Խոյից ստացած խթանի արդյունքում:
Երկվորյակ՝ ուժի բաժանում երկու հոսքերի, բևեռների՝ ոգու և նյութի առաջացում:
Խեցգետին՝ հեղուկ տարերքի՝ ջրի առաջացումը, ուր մայրը ձու է դնում:
Առյուծ՝ կյանքի առաջացումը ձվից, ուժի, էներգիայի, շարժման ու ջերմության հայտնվելը:
Կույս՝ մաքրագործում և կոշտ նախնական նյութի փոխակերպումը նուրբ նյութի:
Կշեռք՝ հավասարակշռություն, ներդաշնակություն հակընդդեմ ուժերի մեջ:
Կարիճ՝ թափառում և անկում, կործանում, որին պիտի հաջորդի վերածնունդը:
Աղեղնավոր՝ արտահայտչականություն, մղում:
Այծեղջյուր՝ վերելք:
Ջրհոս՝ գիտակցում:
Ձկներ՝ հոգևոր աշխարհի «Վերին ջրերից» տեղափոխում «Ստորին ջրեր», որ նախորդում է խեցգետնի գալստյանը:
Աստղաբանների հաշվարկների համաձայն մ.թ.2000 թվին մենք դուրս են գալիս Ձկան դարաշրջանից ու մտնում Ջրհոսի դարաշրջան:

Անխ

Անխը կամ աղեղնավոր խաչը հին Եգիպտոսում արքաների և աստվածների նշանն էր: Դա T-աձև է՝ վերևի մասում աղեղով: Դրան նաև «Իզիդի հանգույց» են կոչել, քանի որ եգիպտացիների համար այդ աղեղը խորհրդանիշն էր կենաց էներգիայի, որը ասոցացնում էին Իզիդի հետ: Բացի այդ, անխը հիշեցնում է, որ իրական կամ ցանկալի աստվածություններին հասնելը կատարվում է հանգույցները քանդելով՝ ի նկատի ունենալով, որ այդ գործողությունը բառի բուն իմաստով հոգիներին «կապանքներից ազատում» է բերում: Այդ խաչը տեսնում ենք նաև Էխնատոնի և արևի պաշտամունքի շատ ուրիշ սպասավորների ձեռքին:
Հուղարկավորման արարողության ժամանակ այդ արտասովոր խաչը դնում էին մեռածի ձեռքն այնպես, որ բռնի աղեղից: Անխը համարում էին հավերժական կենաց ճանապարհը բացող և ոչ օծյալների համար արգելված ոլորտները փակող բանալի: Երբեմն դա նկարում էին

նրա ճակատին՝ աչքերի արանքում, ով հենց նոր ենթարկվել էր օծման ծեսի՝ ի նշան խորհրդի պահպանման պարտավորվածության: Նա, ով իմանում էր անդրաշխարհի գաղտնիքները, ոչ ոքի չպիտի ասեր, թե չէ ինքը կմոռանար:

Ղպտիները անխը համարում էին հավերժության բանալի:

Աղեղնավոր խաչը հանդիպում է հնդկացիների մոտ, ում համար դա խորհրդանշում է ակտիվ ու պասիվ նախասկիզբները կամ երկու սեռերի խորհրդանիշերը միավորող մի անդրոգին էություն:

Էնոթեիզմ

Ընդունված է համարել, որ կան միայն պոլիթեիզմն (բազմաստվածություն) ու մոնոթեիզմը (միաստվածություն): Բայց հնարավոր է երրորդ՝ ոչ այնքան տարածված մի ճանապարհ՝ էնոթեիզմը: Էնոթեիզմը չի ժխտում աստվածների բազմության գոյությունը, բայց առաջարկում է ընտրել նրանցից մեկին: Էնոթեիզմում բացակայում է այն պատկերացումը, թե ընտրված աստվածը ամենաբարձրն է, մյուսներից լավը: Սա միայն նշանակում է, որ նրանք, ովքեր երկրպագում են որևէ աստծո, ընտրել են նրան շատ ուրիշներից: Այսպիսով՝ էնոթեիզմը ենթադրում է, որ ամեն մի ժողովուրդ իր համար աստված է ընտրում և, հետևաբար, տարբեր ժողովուրդների համար կարող են աստվածները տարբեր լինել: Բայց նրանցից ոչ մեկը մյուսից բարձր չէ:

Աչքերը փակ խաղ

«Գյոդել, Էշեր, Բախ՝ անծայր ոսկե շղթա» գրքում մաթեմատիկոս Դուգլաս Խովստադերը նկարագրում է մի խաղ, որ երկուսով են խաղում: Դրա համար ո՛չ խաղաթուղթ է պետք, ո՛չ շախմատ, ո՛չ ինչ-որ ուրիշ մի բան: Միայն՝ երկու ձեռք:

Երկու խաղացողները մատներով միաժամանակ ցույց են տալիս 1-5 թվերը: Նա, ով ավելի մեծ թիվ է ցույց տվել, ստանում է այնքան միավոր, որքան իր և մրցակցի ցույց տված թվերի տարբերությունն է:

Օրինակ՝ եթե խաղացողներից մեկը ցույց է տվել 5, իսկ մյուսը 3, առաջինն ստանում է 2 միավոր: Հաշիվը՝ 2:0: Միանգամից պարզ է, որ պետք է անընդհատ 5 ցույց տաս, որ հաղթես: Բայց մի կանոն էլ կա. եթե խաղացողների ցույց տված թվերի մեջ տարբերությունը 1 է, քիչ ցույց տվողն ստանում է այնքան միավոր, որքան երկուսի ցույց տվածի գումարն է: Օրինակ՝ եթե առաջինը ցույց է տալիս 5, իսկ երկրորդը՝ 4, վերջինն ստանում է 9 միավոր: Եթե երկու խաղացողներն էլ նույն թիվն են ցույց տալիս, հարկավոր է նորից խաղալ: Եվ այդպես, շարուակ: Հաղթում է նա, ով առաջինն է հավաքում 21 միավոր: Իհարկե, կարելի է փողով խաղալ:

Այս պարզ, հեշտ հիշվող կանոններով խաղը, որ ոչ մի իր չի պահանջում, իրականում բավականին նուրբ է ու հոգեբանական, քանի որ անընդհատ ձեզ ստիպում է մտածել, թե ինչ է մտածում մյուս խաղացողը ձեր մտածածի մասին: Հազիվ գտած եք լինում ճիշտ ռազմավարությունը, ու տեղնուտեղը ստիպված եք լինում փոխել դա, որ հակառակորդին նորից շփոթեցնեք:

Ստանալ
Փիլիսոփա Էմանուել Լևինասը համարում էր, որ նկարիչ-ստեղծագործողի աշխատանքը բաղկացած է երեք փուլից՝

- ընդունել,
- գնահատել,
- փոխանցել:

Լիլիթ
Աստվածաշնչի Ծննդոց գրքում Լիլիթի մասին խոսք չկա: Բայց նրա մասին խոսվում է «Զոհար» գրքում, որ վերաբերում է կաբալիստական գրական ժառանգությանը:

Լիլիթը մարդկության պատմության մեջ առաջին կինն է, որ ստեղծվել է Ադամի հետ միասին, կավից ու Աստծո շնչից: Այսպիսով՝ նա հավասար է Ադամին: Նրան կոչում են հոգու ստեղծող Ադամի, որ մինչ այդ հոգի չուներ: Լիլիթը ճաշակել է իմացության պտուղը, բայց ոչ թե մեռել է, այլ իմացել է, որ «ցանկությունը քաղցր է»: Այդ գիտելիքին տիրապետելով՝ նա պահանջկոտ է դառնում և վիճում է Ադամի հետ՝ չցանկանալով սեռական ակտի ժամանակ ներքևը լինել: Նա Ադամին առաջարկում է տեղերը փոխել: Ադամը հրաժարվում է: Վեճի ժամանակ Լիլիթը մեղք է գործում՝ Աստծո անունն է տալիս: Հետո փախչում է Դրախտից: Աստված երեք հրեշտակ է ուղարկում նրա հետևից, որոնք սպառնում են Լիլիթին, որ կսպանեն նրա երեխաներին, եթե սա չվերադառնա: Լիլիթը չի ենթարկվում պահանջներին և մնում է՝ քարանձավում ապրելու: Այս առաջին ֆեմինիստուհին լույս աշխարհ է բերում նայադների ու օձի պոչով քաջքուհիների, որոնց գեղեցկությունը տղամարդկանց խելքահան էր անում:

Փոխառելով այս ավանդությունը՝ քրիստոնյաները Լիլիթին՝ «նրան, որ «ոչ» է ասել», ներկայացնում են որպես վհուկի՝ սև լուսնի թագուհու (եբրայերեն «Լեյլա» նշանակում է «գիշեր») և Սամաէլի ընկերուհու:

Միջնադարյան մի քանի փորագրությունների վրա Լիլիթը պատկերված է ճակատին հեշտոց (եթե միաեղջյուրի ճակատի եղջյուրը առնանդամի սիմվոլն է): Լիլիթը համարվում է Եվայի մրցակիցը (ով այնքանով հնազանդ է, որքանով ստեղծված է Ադամի կողից), նրան օտար է մայրական բնազդը, սիրում է վայելքը հանուն վայելումի և պատրաստ է հատուցելու ազատության համար իր զավակների կյանքով ու միայնությամբ:

Ընդհանուր գծեր
1970 թվին հոգեբան Աբրահամ Մասլոուն որոշեց ուսումնասիրել այն մարդկանց բնավորությունները, ովքեր մինչև վերջ օգտագործել են իրենց հնարավորությունները: Նա սկսեց մի քանի պատմական մեծ դեմքերից, ինչպիսիք են Սպինոզան, Թոմաս Ջեֆերսոնը, Աբրահամ Լինքոլնը, Ջեյն Ադամսը,Ալբերտ Էյնշտեյնն ու Էլիոնորա Ռուզվելտը, և որպես անհատականություններ կայացած այս մարդկանց մեջ գտավ մի քանի ընդհանուր գծեր:

Նրանք ընդունակ են գործելու անկայուն իրավիճակներում:
Նրանք հակում ունեն ինքնաբուխ գաղափարների ու նախաձեռնությունների նկատմամբ:

Նրանք ավելի շատ կենտրոնանում են խնդրի, քան անձնական շահի վրա:
Նրանք լավ հումորի զգացում ունեն:
Նրանք չեն ենթարկվում ուսմունքների, և ոչ էլ «պայմանականությունների դեմ են սկզբունքից ելնելով»:
Նրանք հոգ են տանում մարդկության բարեկեցության համար:
Նրանք ընդունակ են հասկանալու բազմազան կենսափորձի խորությունը:
Նրանք մտերմիկ կապեր են հաստատում սահմանափակ թվով բարեկամների հետ, ոչ թե մակերեսային հարաբերություններ մեծ թվով ծանոթների հետ:
Նրանք պահում են անկողմնակալությունը:

Ինքնագնահատական
Ինքնագնահատականի մեխանիզմը բացահայտող մի գիտափորձ է արվել: Սկզբում սոցիոլոգները առաջարկել են մի խումբ երիտասարդների լրացնել ընդհանուր զարգացածությունը որոշող մի քանի շատ պարզ հարցարաններ: Փորձարկվողները հեշտ գլուխ են բերել հանձնարարությունը: Դրանից հետո նրանց հրավիրել են մի սենյակ, ուր երիտասարդ կանայք են: Թեստը հաջող լրացրածները, այսինքն՝ գիտափորձի բոլոր մասնակիցները, հեշտությամբ ծանոթացել են ամենագեղեցիկ աղջիկների հետ:

Երիտասարդների հաջորդ խմբին նույնպես առաջարկել են հարցարան լրացնել, բայց այս անգամ՝ զգալիորեն բարդացված: Ոչ ոք գլուխ չի հանել առաջադրանքից: Աղջիկների հետ հանդիպելիս համարձակվել են զրույցի բռնվել նրանցից համեմատաբար ավելի քիչ հմայիչների հետ:

Աղջիկների հետ կատարած գիտափորձի արդյունքը նույնն է եղել: Եթե աղջիկները հաջողությամբ հաղթահարում են հեշտ հարցարանը, անվարան ծանոթանում են ամենահմայիչ երիտասարդների հետ և արհամարհանքով վերաբերվում նրանց, ում համարում են իրենց ուշադրությանն անարժան:

Այսպես, հասարակ փորձի միջոցով հնարավոր է շահագործել ինքնագնահատականը: Ամեն մարդ ստանում է լավ կամ վատ գնահատական հասարակությունից, որի ներսում ապրում է: Նրա ինքնագնահատականը մեկ բարձրանում, մեկ իջնում է՝ կախված դրվատանքից կամ նախատինքից: Եթե ուզում եք իրոք ազատ մարդ լինել, պիտի հաղթահարեք կախումը «աղել-յուղելուց» և ինքներդ ձեզ միավորներ տաք: Այդ դեպքում ինքնագնահատականը բարձրացնելու համար կարելի է ռիսկի գնալ, փորձել ինչ-որ իրոք դժվար մի բան անել՝ հասկանալու համար, թե ինչի եք ընդունակ: Բայց չարժե առանձնապես տրտմել, եթե հանկարծ ձախողեք: Հաղթանակը, բացի ձեր տաղանդից, շատ ուրիշ հանգամանքներով էլ է պայմանավորվում: Այնպես որ, հարկավոր է տոնել ոչ թե հաղթանակը, այլ այն, որ դուք խիզախել եք ռիսկի գնալ:

Եռակողմ խաղ
Օրինակ՝ հավ, աղվես, օձ: Երեխաներն անպայման պիտի իմանան, որ կան խաղեր, որին մասնակցում են ոչ թե միայն երկու՝ լավ ու վատ, այլ երեք կողմեր: Այսպես՝ դերերը փոխվում են: Այսպիսի խաղում երեխաները հերթով դառնում են լավը, վատը, լավի դաշնակիցը, վատի դաշնակիցը: Երեխաներն այլևս չեն վախենում վատը լինելուց, հասկանում են, որ

միանգամայն սև կամ միանգամայն սպիտակ չի լինում: Եռակողմ համակարգը թույլ է տալիս հասկանալու համագործակցության էությունը, դերերի փոփոխման նշանակությունն ու դրանց հետ խաղը: Այսպես, հավը կարող է կտցել օձին, օձը՝ խայթել աղվեսին, իսկ աղվեսը՝ ուտել հավին: Բայց եթե հավն ու օձը կամ հավն ու աղվեսը դաշնակցեն, ամեն ինչ կփոխվի:

Այս խաղի մեջ նուրբ հաշվարկ է պետք, ճիշտ այնպես, ինչպես «Յալտա» խաղում (եռանկյուն տախտակով շախմատ, մասնակցում են երեք խաղացող), ուր չի կարելի շատ ակնհայտ ցույց տալ սեփական ուժն ու խելքը, թե չէ հակառակորդները կմիավորվեն ձեր դեմ:

ՎՃ

Մարդն անդադար ինչ-որ մեկի ճնշման տակ է: Քանի երջանիկ է, կասկածի տակ չի առնում այն, ինչ իրեն ճնշում է: Երեխան նորմալ է համարում, որ իրեն ստիպում են ուտել մի բան, որ տանել չի կարողանում. իր ընտանիքն է, չէ՞: Մեծը նորմալ է համարում, որ պետն իրեն ստորացնում է. նրա աշխատանքն է, չէ՞: Մարդը նորմալ է համարում, որ իր կինն իրեն չի հարգում, դե, իր կինն է (կամ, համապատասխանաբար, ամուսինը): Նորմալ ենք համարում, որ կառավարությունն ավելի ու ավելի է իջեցնում մեր գնողունակությունը. քվեարկել ենք, չէ՞ այս կառավարության օգտին:

Մարդ ոչ միայն չի նկատում, որ իրեն խեղդում են, այլև իր աշխատանքը, ընտանիքը, քաղաքական համակարգը և իր բջիջների մեծ մասը համարում է իր անհատականության արտահայտություն: Շատերը գոհ են իրենց՝ ստրուկի կարգավիճակից և պատրաստ են կենաց-մահու կռիվ տալ հանուն նրա, որ իրենց չազատեն շղթաներից:

Որպեսզի սրանք ուշքի գան, հարկավոր է ՎՃ (Վերաարժևորման ճգնաժամ): ՎՃ-ն կարող է բռնկվել ամենատարբեր ձևերով՝ դժբախտ պատահար, հիվանդություն, կողակցից բաժանում կամ աշխատանքից ազատում: Ճգնաժամը մարդուն սարսափեցնում է, բայց գոնե մի քանի ակնթարթով ազատում է նրան սովորական դարձած ճնշումից: ՎՃ ապրելով՝ մարդը հաճախ անմիջապես էլ գնում է փնտրելու մի ուրիշ բանտ, որով կփոխարինի ավերվածը: Բաժանվածն անմիջապես ուզում է երկրորդ անգամ ամուսնանալ: Աշխատանքից ազատվածը համաձայնում է ավելի ծանր մի աշխատանքի…. Բայց այն պահից, երբ սկսվում է ՎՃ-ն, մինչև այն պահը, երբ մարդը նորից կայունություն է ձեռք բերում, մի պայծառացում է ապրում, երբ հասկանում է, թե ինչպիսին կարող է լինել իսկական ազատությունը: Իսկ դա շատ է վախեցնում նրան:

Բանտարկյալի երկընտրանքը

1950 թվականին Մերլին Դրեշերի ու Մերիք Ֆլուդի հայտնագործությունը բանտարկյալի երկընտրանքն էր: Ահա՝ դրա էությունը. երկու հոգի ձերբակալվում ու մենախուց են տարվում բանկ մուտք գործելիս: Ոստիկանը, որպեսզի ստիպի նրանց խոստովանել բանկը թալանելու մտադրությունը, հետևյալ առաջարկն է անում. եթե լռեն, ամեն մեկը երկու տարվա բանտարկության կդատապարտվի: Եթե մեկը մեղադրի մյուսին, իսկ սա այդպես էլ չխոսի, մատնողը կազատվի, իսկ լռողը կդատապարտվի հինգ տարվա ազատազրկման: Եթե երկուսն էլ իրար մեղադրեն, երկուսն էլ կնստեն չորս տարի: Ընդ որում, մեղադրվողները գիտեն, որ նման առաջարկ արվել է իրենց երկուսին էլ:

Ի՞նչ է կատարվում դրանից հետո: Երկու ձերբակալվածները մտածում են. «Վստահ եմ, որ մյուսը «կծակվի»: Նա ինձ կմեղադրի, ինձ հինգ տարի կտան, իսկ իրեն կազատեն: Ու դա արդեն չափազանց անարդար կլինի»: Հետո երկուսի խելքին էլ փչում է. «Եթե ես մատնեմ, ինձ կազատեն: Ինչո՞ւ երկուսս էլ տանջվենք, եթե մեզնից մեկը կարող է խուսափել պատժից»: Կարճ ասած՝ այսպիսի իրադրության մեջ մեծ մասամբ փորձարկվողները մատնում են իրար: Քանի որ երկրորդ գործակիցը մտածում է ճիշտ այնպես, ինչպես առաջինը, երկուսն էլ չորս տարի ազատազրկման են դատապարտվում:

Բայց եթե երկուսն էլ լռեին, ընդամենը երկու տարով բանտ կընկնեին:

Մի ավելի տարօրինակ օրինաչափություն. եթե նույնիսկ կասկածյալները փորձի ընթացքում կարողանում են հանգիստ շփվել իրար հետ, արդյունքը մնում է նույնը: Երկու մարդ, նույնիսկ միասին վարքի ռազմավարություն մշակած լինելով, վերջում դավաճանում են: Խնդիրն այն է, որ մարդիկ ընդունակ չեն իրար միանգամայն վստահելու:

Երաժշտությունը

Եթե հնում Երկրի վրա ապրող մարդիկ լսեին Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտին, անբարեհունչ կհամարեին այդ երաժշտությունը, որովհետև նրանց ականջները սովոր չէին հնչյունների նման համակցմանը: Առաջ մարդիկ գիտեին միայն այն հնչյունները, որ դուրս էին գալիս երաժշտական աղեղից՝ աշխարհի առաջին երաժշտական գործիքից: Հիմնական նոտան հնչում էր ներքևի կամ վերևի օկտավայի նոտայի հետ: Օրինակ՝ ականջի համար հաճելի էր համարվում «ներքևի և վերևի դո-երի միասնություն» ակորդը: Հետո սկսեց ներդաշնակ համարվել հիմնական նոտան՝ իր քառորդների՝ դո-ի ու ֆա-ի հետ: Ավելի ուշ մարդկանց սկսեց դուր գալ հիմնական նոտան քվինտայի հետ, որ հինգ տոն էր ցածր՝ դո և սոլ, հետո նաև տերցիան՝ դո, մի:

Ինտերվալի այս տեսակը տարածված էր ընդհուպ մինչև միջնադար: Ընդ որում տրիտոնը՝ աղավաղված եռահնչյունը, արգելված էր, և «դո-ֆա դիեզ» ինտերվալը համարվում էր diabolis in musica, որ բառացի թարգմանվում է որպես «դևը երաժշտության մեջ»:

Մոցարտից սկսած՝ երաժիշտներն սկսում են օգտագործել յոթերորդ նոտան: Դո-ն համադրվում է սի բեմոլի հետ, և «դո-մի-սոլ» ինտերվալը սկզբում ընդունելի է թվում, այնուհետև՝ կատարյալ:

Մեր օրերում հասել ենք հիմնական նոտայից տասնմեկերորդին թե տասներեքերորդին: Եվ ջազային երաժշտության մեջ թույլատրվում է ամենաաններդաշնակ ինտերվալների կիրառությունը:

Երաժշտությունը հնարավոր է ոսկորներով էլ լսել: Մարմինը ականջի պես ենթակա չէ երաժշտության ունկնդրության մշակույթի ազդեցությանը և չի մեկնաբանում լսածը, ինչպես բանականությունը: Նա կարող է ընկալել այն, ինչ իրեն դուր է գալիս: Լյուդվիգ վան Բեթհովենը, որ կյանքի վերջում լսողությունը կորցրել էր, երաժշտություն էր գրում բերանում բռնելով քանոնը, որի մի ծայրը դաշնամուրի վրա էր: Նա երաժշտությունն զգում էր մարմնով:

Երեք փուլ

Ցանկացած հոգու զարգացում անցնում է երեք փուլ՝ վախ, հարցերի առաջացում, սեր:

Երբևէ պատմված ցանկացած պատմություն բարբառում է այս երեք փուլերից մեկի մասին: Մի փուլ անցնելու համար հնարավոր է՝ մի կյանք պետք լինի, հնարավոր է՝ մի քանի վերամարմնավորում, մի օր, մի ժամ կամ մի րոպե:

Տեսանելիացում

Տեսանելիացումը հոգեթերապիայի գործունեության ու հիպնոսի խնդիրների լուծման համար օգտագործվող տեխնիկաներից մեկն է: Այցելուին առաջարկում են փակել աչքերը և պատկերացնել իր կյանքի ամենադժվար պահը: Նա պիտի պատմի, նկարագրի բոլոր մանրամասները, հնարավորինս խորը վերապրի նաև իր հետ կապված տհաճ զգացողությունները: Այս փուլում կարևոր է, որ այցելուն ճիշտն ասի ու չփորձի արդարանալ՝ օգտագործելով սուտը, ինչ է՝ իրեն պաշտպանի կամ թեթևացնի հուշերը:

Հենց այցելուն պատմում է երեխա ժամանակ ապրած ցնցման մասին, թերապևտն առաջարկում է մեծին, որ այցելուն է, անցյալի երեխային օգնություն ուղարկել: Օրինակ՝ եթե անցյալում արյունապղծություն է եղել, երիտասարդ կինն իր երևակայության մեջ ուղևորվում է անցյալ՝ օգնելու փոքրիկ աղջկան, որ ինքն է եղել: Այցելուն նկարագրում է հանդիպումը և կրկնում բառերը, որ ասում է երեխա ժամանակի իրեն: Նա պատմում է՝ ինչ է անում, որ երեխային մխիթարի կամ նրա վրեժը լուծի: Հրաշագործ մեծը, ինչպես հեքիաթի փերին, ամեն ինչ կարող է: Կարող է հորը ստիպել՝ ներողություն խնդրել, կարող է սպանել նրան, կարող է աղջկան մոգական ուժով օժտել, որ նա ինքը իր վրեժը լուծի: Մեծն անպայման պիտի երեխային հույսի էներգիա տա, այնտեղ փոխանցի, ուր մինչ այդ միայն ցավն էր:

Այդպիսին է երևակայության իշխանությունը: Նա կարող է հաղթահարել տարածությունը, ժամանակը, մարդկանց տարբերությունը, որ ստեղծի նոր բան՝ ոչ այդքան ծանր անցյալ: Այս տեխնիկայի կիրառումը կարող է արագ ու զարմանալի արդյունք տալ՝ այցելուին հնարավորություն տալով վերապրելու եղածն ու ինքն իրեն օգնելու:

«Մարդ» հասկացության բնորոշումը

Վեցամսյա սաղմը՝ զարգացած անդամներով, արդեն մա՞րդ է: Եթե՝ այո, մա՞րդ է արդյոք եռամսյա սաղմը: Հենց նոր բեղմնավորված ձվաբջիջը մա՞րդ է: Կոմայի մեջ հիվանդը, որ վեց ամիս գիտակցության չի եկել, բայց սիրտը խփում է, թոքերն էլ՝ շնչում, դեռ մա՞րդ է: Սնուցող լուծույթում պահվող մարդկային ուղեղը մա՞րդ է: Համակարգիչը, որ ընդունակ է արտահայտելու մարդկային ուղեղի մտածողության բոլոր գործընթացները, արժանի՞ է մարդ կոչվելու: Ռոբոտը, որ արտաքինից նման է մարդու և օժտված է մարդու ուղեղի նման ուղեղով, մարդկային արարա՞ծ է: Մարդ-կլոնը, որ ստեղծվել է գենետիկ փոփոխությունների արդյունքում՝ իր համածին եղբորը «պահեստամասեր» մատակարարելու համար, մա՞րդ է:

Այս ամենը պարզ չէ: Հնուց ի վեր մինչև միջին դարեր կանայք, օտարականներն ու ստրուկները մարդ չէին համարվում: Սկզբունքորեն, միայն օրենսդիրը կարող է որոշել՝ ով է մարդ հանդիսանում, իսկ ով՝ ոչ: Դրանում նրան պիտի օգնեն բնագետները, փիլիսոփաները, ծրագրավորողները, գենաբանները, հոգևորականները, բանաստեղծները, ֆիզիկոսները: Որովհետև «մարդկային արարած» հասկացությունն ավելի ու ավելի դժվար է բնորոշվում:

Ամեն մեկը՝ իր տեղում

Սոցիոլոգ Ֆիլիպ Փեյսելի կարծիքով կանայք բնավորությամբ չորս հիմնական տեսակների են բաժանվում՝ մայր, սիրուհի, ռազմուհի, դաստիարակ:
Մայրը հիմնական ուշադրությունը սևեռում է ընտանիք կազմելու, երեխաներ ունենալու ու դաստիարակելու վրա:
Սիրուհին գայթակղում ու փնտրում է սիրային կրքոտ արկածներ: Ռազմուհին ձգտում է տարածքի գրավման ու իշխանության, պայքարում է հանուն գաղափարի, իրագործում է քաղաքական նպատակները: Դաստիարակը հետաքրքրվում է արվեստով, հոգևոր բաներով կամ բժշկությամբ: Նա իդեալական մուսա է, ուսուցիչ, բժիշկ:

Կար ժամանակ էլ, որ կանայք վեստալուհիներ էին:

Ամեն մի կին շատ թե քիչ ունի բոլոր այս գծերից: Խնդիրն առաջանում է այն դեպքում, երբ կինը, պատահում է, չի համապատասխանում դերին, որ հասարակությունն է նրա վզին փաթաթում: Եթե սիրուհուն ստիպենք մոր դերում լինել, իսկ ռազմուհուն՝ դաստիարակի, հնարավոր է՝ ողբերգություն լինի:

Տղամարդիկ էլ չորս հիմնական բնավորություն ունեն՝ հողագործ, քոչվոր, շինարար, ռազմիկ: Աստվածաշնչում հանդիպում ենք քոչվոր Աբելին, որ հոտ է արածեցնում, ու հողագործ Կայենին, որ զբաղված է բերք աճեցնելով: Կայենն սպանում է Աբելին, և Աստված պատժում է նրան՝ ասելով. «Դու վտարանդի կլինես ու կթափառես երկրով մեկ»: Հողագործ Կայենն ստիպված է դառնալ քոչվոր: Նա պիտի մի բան անի, ինչին հակված չէ: Ու դրանից է տառապում:

Երջանիկ ամուսնության բերող միակ միությունը «մայր» և «հողագործ» զույգն է: Երկուսն էլ ձգտում են մշտականության և հանգստի: Մնացած բոլոր զույգերը կարող են հսկայական կիրք ապրել, բայց բախումը նրանց մեջ անխուսափելի է:
Կայացած կնոջ նպատակը և՛ մայր, և՛ սիրուհի, և՛ ռազմուհի, և՛ դաստիարակ դառնալն է:
Միայն այդ դեպքում կարող ենք ասել, որ արքայադուստրը վերածվել է թագուհու:
Կայացած տղամարդու նպատակը և՛ հողագործ, և՛ քոչվոր, և՛ շինարար, և՛ ռազմիկ դառնալն է:
Միայն այդ դեպքում կարող ենք ասել, որ արքայազնը վերածվել է արքայի:
Ու երբ կայացած արքան հանդիպում է կայացած թագուհուն, մի մոգական բան է կատարվում:
Ե՛վ կիրք է լինում, և՛ մշտականություն: Բայց սա շատ հազվադեպ է լինում:

Տիեզերական ձուն

Ամեն ինչ սկսվում է ձվից, և ամեն ինչ վերջանում է ձվով: Շատ ժողովուրդների առասպելաբանություններում ձուն համարվում է արշալույսի ու մայրամուտի խորհրդանիշը:

Եգիպտական հնագույն առասպելներում աշխարհի արարումը նկարագրված է որպես իր մեջ արևն ու կյանքի սաղմերը պարունակող Տիեզերական ձվից ելնում: Օրփեոսականության մեջ համարվում է, որ ժամանակը խժռող Քրոնոսը մթության մեջ արարել է արծաթե մի ձու: Դրա կեսերից առաջացել են երկինքն ու երկիրը: Դրանից է դուրս եկել Ֆանեսը՝ արարիչ-աստվածը, որին պատկերել են բզզացող մեղվի տեսքով:

Հնդիկները համարում են, որ Տիեզերքը սկզբում զուրկ է եղել էությունից, քանի դեռ Հիրանիա Գարբհա ձվի ձևը չէր ստացել, որի կճեպը սահման դարձավ ոչնչի ու ինչ-որ բանի մեջ: Մի տարի անց այդ Տիեզերական ձուն բացվել է, ու դրա միջի թաղանթը վերածվել է ամպի, ճեղքերը՝ գետերի, իսկ հեղուկը՝ օվկիանոսի:

Չինացիները հավատում են, որ նախնական քաոսը ձվից է ստեղծվել. ձուն ջարդվել է, և առաջացել են Ին երկիրը և Յան երկինքը: Պոլինեզացիները պնդում են, որ ի սկզբանե եղել է Տե Տումու՝ հիմքը և Տե Պապա՝ ժայռը պարունակող ձուն: Երբ դա ջարդվել է, առաջացել են երեք իրար վրա դարսված հարթակներ, որտեղ Տե Տումուն և Տե Պապան ստեղծել են մարդուն, կենդանիներին ու բույսերը:

Կաբալայի համաձայն Տիեզերքը առաջացել է ձվից, որը ջարդվել-բաժանվել է 288 մասի: Ճապոնական, ֆիննական, սլավոնական ու փյունիկյան՝ աշխարհարարման մասին առասպելները նույնպես համաշխարհային ձվից են խոսում:
Մի ժողովրդի համար բեղմնավորման խորհրդանիշ ձուն ուրիշների մոտ դառնում է հակառակը՝ մահվան խորհրդանիշ, ձու են ուտում որպես սգի նշան: Դրանք նույնիսկ դնում են գերեզմանի մեջ, որ մահացածը կարողանա ուժ ստանալ անդրաշխարհում ճամփորդելու համար:

Պատմություն խոզերի մասին
Ցանկանալով բարելավել մսի համը՝ խոզի մսի վաճառականների ինչ-որ միություն օգնության խնդրանքով դիմել է քիմիկոս, պրոֆեսոր Դանտցերին Բորդոյից: Մսավաճառներն ուշադրություն են դարձրել նրան, որ խոզի միսն աստիճանաբար մեզի ավելի ու ավելի ընդգծված համ է ձեռք բերում ու դրանով դառնում է անօգտագործելի: Պրոֆեսոր Դանտցերը հետազոտություն է արել կառափնարանում և պատճառը գտել: Խոզերը, որոնց միսը մեզի սուր հոտ էր ունենում, մյուսներից ավելի լավ էին հասկանում՝ ինչ է իրենց սպասում, և մահից առաջ խիստ սարսափ էին ապրում:

Պրոֆեսոր Դանտցերը երկու ելք է առաջարկել՝ կենդանիներին հանգստացնող դեղ տալ կամ չբաժանել նրանց իրենց ձագերից:

Դանտցերը նկատել է, որ եթե խոզին թողնում են խոճկորների հետ, կենդանին հաշտվում է կատարվելիքի հետ ու չի տագնապում:

Մսավաճառներն ընտրեցին հանգստացնող դեղը: Այսպիսով՝ խոզի մսի սպառողին հասնում է նաև վալիումի այն չափաբաժինը, որ ստացել է խոզը: Պետք է ասել, որ վալիումը մի տհաճ հատկություն ունի: Շատ արագ կախում է առաջացնում: Ու մարդն ինքը սկսում է անընդհատ վալիումի կարիք ունենալ, որ սթրես չապրի:

Զուգահեռ իրականություն
Հնարավոր է՝ իրականությունը, որտեղ ապրում ենք, միակը չէ: Կարող են և զուգահեռ իրականություններ գոյություն ունենալ:

Օրինակ՝ այս իրականության մեջ դուք կարդում եք այս գիրքը, իսկ ուրիշ իրականության մեջ ձեզ սպանում են: Մի երրորդում վիճակախաղում շահում եք, չորրորդում հանկարծ ուզեցիք

ինքնասպան լինել և այլն: Հնարավոր է՝ հարյուրավոր, գուցե և հազարավոր իրականություններ մշտապես աճում ու զարգանում են ծառի ճյուղերի նման:

Բայց ահա ընտրված է հիմնական իրականության ճանապարհը, որոշված է: Եվ մյուս իրականություններն անհետանում են: Բայց հենց մի իրականությունը քարանում է, նրանից տեղնուտեղը բողբոջում են բազմաթիվ նորերը: Ցողունը, որի վրա աճում են ճյուղ-իրականությունները, ամրանում է, և հին իրականություններն անհասանելի են դառնում:

Ակնհայտ է, որ իրականությունը, որում դուք «Հանրագիտարանն» եք կարդում, հենց ընտրյալ իրականությունն է՝ ամրացած և որոշված (ո՞ւմ կողմից, ի՞նչ չափանիշներով): Այս միտքը կարող է միանգամայն անհեթեթ թվալ, բայց քվանտային ֆիզիկան հենց նույն եզրակացությանն է գալիս: Կարող եք պատկերացնել, որ իրականությունը ոչ միայն առաջ է ընթանում: Նա կարող է նաև կողմերից տարածվել (հիշեք Շրոյդինգերի կատվին. «կատուն մեռած է» իրականությունը զուգահեռ է «կատուն ապրում է» իրականությանը):

Բաժակ բաժակի զարկենք

Բաժակ բաժակի զարկելը հին ֆրանկական սովորույթ է: Զարկելիս հարկավոր էր մի քանի կաթիլ հեղուկ սեփական բաժակից ցողել բաժակակցի բաժակի մեջ: Սա ծառայում էր որպես ապացույց, որ գավաթների պարունակությունը թունավորված չէ: Որքան ուժեղ էին գավաթներն իրար զարկվում, այնքան ավելի շատ գինի էր թափվում դրանց եզրերից: Նույնքան էլ հեշտ էր լինում ապացուցել ազնվությունը:

Միասին լինել

Սուֆիական փիլիսոփայության համաձայն երջանկության պարտադիր պայմաններից մեկը ընկերների կամ սիրած մարդկանց կողքին նստելու հնարավորությունն է: Հարկավոր է միայն նստել ու ոչինչ չանել, ոչինչ չխոսել: Նայել իրար կամ նույնիսկ չնայել էլ: Բերկրանք ես ապրում նրանից, որ շրջապատված ես մարդկանցով, ում հետ քեզ լավ ես զգում: Էլ ոչ մի բանով հարկ չկա քեզ զբաղեցնելու, լցնելու տարածությունը հնչյուններով: Բավական է՝ լուռ զգաս, որ ընկերներդ ներկա են:

Հուղարկավորության ծեսերը

Հուղարկավորության առաջին ծեսերը ի հայտ են եկել ժամանակակից մարդու՝ Homo sapiens-ի հետ՝ մոտավորապես 120 հազար տարի առաջ: Ամենահին հուղարկավորումները հայտնաբերվել են Իսրայելում՝ Կաֆզեխ լեռան վրա՝ Մեռյալ ծովի ափից ոչ հեռու: Հնէաբանները կմախքի ու ենթադրաբար մահացածներին պատկանած իրերի մնացորդներ են գտել:

Հուղարկավորության մշակույթի հետ ծնվում է ենթադրությունն այն մասին, թե ինչ է լինում մահից հետո, ի հայտ են գալիս դրախտի և դժոխքի, ապրած կյանքը դատելու մասին հասկացությունները, դրանց հետ էլ՝ կրոնը: Քանի դեռ մարդիկ պարզապես մի կողմ էին նետում իրենց ցեղակիցների դիակները, մահն աշխարհում ամեն ինչի վերջն էր: Հենց մարդն սկսեց մեռյալների վրա ծեսեր անել, ոչ միայն հոգևորությունն ի հայտ եկավ, այլև վիպերգությունը: Սկսեց երևակայությունը շարժվել:

Հոգու բաղադրությունը
Սկզբում մարդկային հոգին որոշվում էր երեք գործոնով՝ ժառանգականությամբ, կարմայով և ազատ ընտրությամբ: Որպես կանոն, սկզբում դրանք ունենում են հետևյալ չափաբաժինները. 25% ժառանգականություն, 25% կարմա, 50% ազատ ընտրություն:

Ժառանգականությունը. Ճանապարհի սկզբին հոգու ապագան քառորդ չափով որոշվում է գենների որակով, կրթությամբ, բնակության վայրով և շրջապատով: Այս ամենը կախված է ծնողներից:

Կարմա. Ճանապարհի սկզբին հոգու ապագան քառորդ մասով որոշվում է նախորդ կյանքից մնացած տարրերով, չգիտակցված ցանկություններով, սխալներով, վերքերով և նման բաներով, որոնք դեռ հուզում են նրա ենթագիտակցությունը:

Ազատ ընտրությունը. Ճանապարհի սկզբին հոգին կիսով չափ ազատորեն ընտրում է, թե ինչ անի: Դրսի ազդեցությունը գործում է ընդամենը 50%-ով:

25%, 25%, 50%՝ այսպիսին է հարաբերակցությունն սկզբում: 50% ազատ ընտրություն ունենալով՝ մարդ կարող է հետագայում փոխել այդ հարաբերակցությունը: Նա կարող է ազատվել ժառանգականության ազդեցությունից՝ երիտասարդ տարիքում մերժելով ծնողների իշխանությունը: Կամ կարող է ազատվել իր կարմայից՝ հրաժարվելով ենթագիտակցական ազդակներից: Եվ ընդհակառակը, նա կարող է հրաժարվել ազատ ընտրությունից և խաղալիք դառնալ ծնողների կամ իր ենթագիտակցության ձեռքին:

Այսպես՝ շրջանը փակվում է: Գերագույն պարադոքսը՝ ազատ ընտրություն ունեցող մարդը կարող է հրաժարվել ազատ ընտրությունից:

Պիտերի սկզբունքը
«Հիերարխիկ համակարգում ցանկացած աշխատող բարձրանում է մինչև իր ոչ բանիմացությունը»: Այս սկզբունքն առաջին անգամ ձևակերպել է Լոուրենս Ջ.Պիտերը 1969 թվին: Նա ուզում էր նոր գիտություն ստեղծել՝ հիերարխոլոգիա, որը կզբաղվի աշխատողի ոչ բանիմացության խնդրով: Նա ուզում էր հետազոտել, վերլուծել ու չափել ոչ բանիմացության բնական զարգացումը ձեռնարկությունների ու կազմակերպությունների ներսում: Պիտերը հետևյալ դիտարկումն է արել. ցանկացած կազմակերպությունում, եթե աշխատողն իր գործը լավ է անում, նրան ավելի բարդ աշխատանք են հանձնարարում: Եթե դրանից էլ է բարեհաջող գլուխ հանում, բարձրացնում են պաշտոնը: Եվ այսպես՝ այնքան, մինչև աշխատողն ստանում է մի տեղ, որ իրենից ավելին է պահանջում, քան ինքը կարող է անել: Այսքանով նրա առաջընթացը կանգ է առնում:

«Պիտերի սկզբունքը» երկու հետևության է հանգել. նախ՝ կազմակերպությունում աշխատանքն իրագործվում է նրանց կողմից, ովքեր դեռ չեն հասել իրենց ոչ բանիմացության մակարդակին: Երկրորդը՝ բանիմաց, արդյունավետ աշխատողը հազվադեպ է համաձայնում մնալ բանիմացության իր մակարդակի վրա: Նա ամեն ինչ անում է՝ հասնելու համար մի մակարդակի, որտեղ ինքը միանգամայն անարդյունավետ է լինելու:

Նոոսֆերա

Գլխուղեղի ձախ կիսագունդը ենթարկվում է տրամաբանությանը: Դա «թվերի ուղեղն» է: Աջ կիսագունդն ապրում է կանխազգացումներով: Դա «ձևերի ուղեղն» է: Նույն տեղեկությանը գլխուղեղի երկու կիսագնդերը տարբեր կերպ են արձագանքում և երբեմն գալիս են միանգամայն հակադիր եզրակացությունների:

Երևում է՝ աջ կիսագունդը՝ ենթագիտակցական խորհուրդների աղբյուրը, միայն գիշերները՝ քնի միջոցով է իր կարծիքը հայտնում ձախին՝ գիտակցաբար գործող կիսագնդին, ինչպես զարգացած կանխազգացություն ունեցող կինն է զգուշացնում փսփսում նյութապաշտ ամուսնու ականջին:

Ռուս գիտնական Վլադիմիր Վերնադսկին («բիոսֆերա» հասկացության հեղինակը) և ֆրանսիացի փիլիսոփա Տեյարդ դը Շարդենը ենթադրում են, որ կանխազգացող ձախ կիսագունդը ընդունակ է միանալու նրան, որ այս երկուսը կոչում են «նոոսֆերա»: Նոոսֆերան ասես մթնոլորտի նման մեր մոլորակը ծրարող մի մեծ ամպ լինի: Այս պարփակ, ոչ նյութական ամպը գոյանում է մարդկային ենթագիտակցությունից՝ գաղափարներից, որ հեռարձակում է աջ կիսագունդը: Նոոսֆերան մի տեսակ մարդկային գլոբալ բանականություն է: Մեզ թվում է, թե մի բան հորինում կամ արարում ենք: Իրականում մեր աջ կիսագունդը նոոսֆերայից տեղեկություն է հայթայթում: Եվ երբ մեր ձախ կիսագունդը անտում է աջին, տեղեկությունը վերածվում է մտքի, որ կոնկրետանում է գործողություններում: Այս վարկածի համաձայն նկարիչը, գյուտարարը կամ գրողը ընդամենը ռադիոընդունիչներ են, որ ընդունակ են կոլեկտիվ ենթագիտակցության մեջ աջ կիսագնդով որսալու գաղափարը և, իրենց աջ և ձախ կիսագնդերում ազատ կապ հաստատելով, վերականգնում են գաղափարը, որ մինչ այդ, բոլորին հասանելի, լողում էր նոոսֆերայում:

Սիրենները

«Սիրենը» պարանով կապողն է, որովհետև համարվում է, թե իբր նրանց երգը ընդունակ է կապելու, հմայելու տղամարդկանց: Գետերի աստվածություն Աքելոսի և Կալիոպե փերու դուստրերը կանացի դեմք, ձեռքեր ու կուրծք ունեն և ձկան երկար պոչ: Նրանց այդպիսին է դարձրել Աֆրոդիտեն, ով, ըստ առասպելի, պատժել է նրանց, որովհետև իրենց կուսությունը չեն տվել աստծուն: Սիրենների կախարդական երգով հմայված նավազները շեղվում էին երթուղուց, նավաբեկության ենթարկվում, իսկ սիրենները խժռում էին նրանց մարմինները:

Շատ սիրեններ կային, բայց ամենահանրահայտը Պարթենոպան էր, ում, ըստ ավանդության, դուրս են նետել Տիրենյան ծովի ափ՝ Կապրիի դիմաց, ուր նա հիմնել է Նեապոլը:

Ալքիմիկոսների համար սիրենները խորհրդանիշն են ձկան և Մերկուրիի միության, որ մեծ ստեղծագործության արարմանն են մասնակցում:

Անդերսենի «Ջրահարսը» հեքիաթում ավելի պարզ պատմվում է, թե ի սեր արքայազնի սիրենը փոխում է իր պոչը կանացի ոտքերով, որ կարողանա պարել: Սա առակ է այն մասին, որ հսկայական տառապանքների գնով մարդիկ ջանում են հաղթահարել իրենց մեջ կենդանական փուլը ու դառնալ ուղղահայաց քայլող:

Դևիդ Բոմ

Երկար տարիներ աշխատելով տեսական ֆիզիկայի և քվանտային մեխանիկայի ասպարեզում՝ Դևիդ Բոմը հետաքրքրվեց, թե իր տեսությունն ինչքանո՞վ է փիլիսոփայության մեջ կիրառելի: Լազերային ճառագայթների միջոցով ստացվող գոլոգրամների՝ եռաչափ պատկերների այդ մասնագետը 1950-ականներին՝ հակակոմունիստական «վհուկների որսի» ժամանակ ստիպված էր լքելու Միացյալ Նահանգները: Ավելի ուշ նացիստներին կարեկցողները նրան վտարում են Բրազիլիայից: Դևիդ Բոմը տեղափոխվում է Անգլիա և սկսում դասավանդել Լոնդոնի համալսարանում: Նա տարվում է տիբեթյան բուդդիզմով և դառնում դալայ-լամայի ընկերը:

Բոմը զարգացրեց մի տեսություն, համաձայն որի տիեզերքն ընդամենը մի մեծ պատրանք է՝ նման ծավալային գոլոգրաֆիկ պատկերի:Նա բացեիբաց հայտարարեց դրա մասին: Տիեզերքը կառուցված է այնպես, ինչպես գոլոգրաման՝ ընդգրկուն մի պատկեր, որի ամեն մի մասը տեղեկություն է պարունակում ամբողջ պատկերի մասին: Եթե խախտենք գոլոգրամայի ամբողջականությունը, նրա ամեն մի դրվագի մեջ տեղեկություն կպարունակվի ամբողջ պատկերի մասին:

Դևիդ Բոմը տիեզերքը պատկերացնում էր որպես անվերջ ալիքների կառույց, ուր ամեն ինչ փոխկապակցված է: Այնտեղ գոյությունն ու չգոյությունը, ոգին ու նյութականը ընդամենը լույսի միակ աղբյուրի տարբեր դրսևորումներն են, ինչի շնորհիվ պատկերը ծավալային է դառնում: Նա լույսի այդ աղբյուրն անվանել է Կյանք:

Էնշտեյնը, որ գործընկերոջ նորարարական գաղափարներին սկզբում քննադատաբար էր վերաբերվում, հետո սկսել է աշխույժ հետաքրքրություն ցուցաբերել Բոմի գյուտի նկատմամբ: Հեռանալով խնդիրը շրջագծող սահմանից դուրս գալու համար չափազանց պահպանողական գիտական շրջանակներից՝ Դևիդ Բոմը առանց տատանվելու հղում էր անում ինդուիզմին կամ չինական Դաոսիզմին՝ փորձելով բացատրել իր պատկերացումները ֆիզիկայի մասին: Նա չի սահմանափակում մարմինն ու միտքը և համարում է, որ գոյություն ունի մարդկության ընդհանուր գիտակցություն: Դա տեսնելու համար հարկավոր է որոշակի հեռավորությունից լուսավորել որոշակի շերտը (քանի որ բոլոր գոյություն ունեցողներն ընդամենը տեղեկություն են, որ մատչելի են դառնում լույսի ներքո: Սա նման է նրան, որ գոլոգրաման ծավալի պատրանք է ստեղծում միայն այն ժամանակ, երբ լազերային ճառագայթն ընկնում է նրա վրա ուղիղ անկյան տակ): Բոմը ենթադրում էր, որ քվանտային ֆիզիկայի մեթոդներով ու մեդիտացիայով հնարավոր է բացահայտել իրականության ծածուկ շերտերը:
Նրա մետաֆիզիկական պատկերացումների համաձայն մահ չկա: Կա միայն անցում գոյության մի էներգետիկական մակարդակից մյուսին:

Դևիդ Բոմը «անցում է կատարել նոր էներգետիկական մակարդակ» 1992 թվին՝ այդպես էլ Տիեզերքը չքննած մինչև վերջ: Բայց նա բացահայտեց հետազոտության մի նոր ոլորտ փիլիսոփայության ու գիտության խաչմերուկում:

Գեայի պատասխանը
Թե որտեղից են հայտնվում սև ամպի նման մեծ մորեխները, երկար ժամանակ հարց էր մնում: Դրանց երամների տեղաշարժը սովորական բնական երևույթ չէ: Դա մարդու գյուղատնտեսական չափազանց եռանդուն աշխատանքի հետևանք է: Հսկայական

տարածքներ ցանում են միևնույն կուլտուրան, ու դրանով սնվող միջատները սկսում են մեծ քանակությամբ հավաքվել նույն տեղում և, բնականաբար, արագ ու անզուսպ բազմանալ: Մինչև մարդու միջամտելը մորեխն անվնաս միջատ էր, որ չէր հավաքվում հսկայական խմբով: Բայց մարդու՝ աշխարհը փոխելու փորձին նա յուրովի պատասխանեց:
Եթե մարդը երկրակեղևը ցնցող ատոմային ռումբ է պայթեցնում, Գեան պատասխանում է երկրաշարժով: Եթե մարդը նավթ՝ Երկրի սև ոսկին, արդյունահանում է թունավոր գոլորշիներով, որոնք հավաքվում ու հեղձուցիչ ամպ են դառնում, Երկիրը պատասխանում է ջերմաստիճանի բարձրացմամբ: Դա սառցադաշտերի հալչելու և ջրհեղեղի պատճառ է դառնում:

Մարդը դեռ չի հասկացել, որ իր հարազատ մոլորակը պատասխանում է իր ամեն մի մարտահրավերին, և զարմանում է, երբ տեղի է ունենում մի բան, որ ինքը կոչում է «բնական աղետ»: Իրականում աղետները «արհեստական» են և տեղի են ունենում, քանի որ մարդը չի կարողանում իր մոլորակի հետ երկխոսություն վարել:

Երեք քայլ առաջ, երկուսը՝ հետ

Քաղաքակրթությունները ծնվում, աճում ու մեռնում են, ինչպես կենդանի օրգանիզմները: Նրանք ունեն իրենց սեփական ռիթմը՝ երեք քայլ առաջ, երկուսը՝ հետ: Նրանք շնչում են: Նրանք հիացում են ապրում, երբ ամեն ինչ ընթանում է համաչափ պարուրակով՝ ավելի շատ հարմարավետություն, ավելի շատ ազատություն, ավելի քիչ աշխատանք, ապրելու լավագույն պայմաններ, ավելի քիչ դժբախտություն: Սա մուտքի պահն է՝ երեք քայլ առաջ:
Հետո, հասնելով որոշակի մակարդակի, պոռթկումը մարում է, և կորն իջնում է: Սկսվում է խառնաշփոթը, հետո ծագում է վախը, սրանք էլ բերում են բռնության ու քաոսի՝ երկու քայլ հետ:

Որպես կանոն, այս փուլում տեղի է ունենում լիակատար անկում՝ ելք:

Իսկ հետո նորից սկսվում է ներշնչումը:

Բայց որքա՞ն ժամանակ է զուր կորչում: Այսպես՝ Հռոմեական կայսրությունն ստեղծվել է, աճել, ծաղկում ապրել և մյուս քաղաքակրթություններից բոլոր ասպարեզներում՝ իրավունք, մշակույթ, գիտություն և այլն, առաջ է եղել: Հետո նրան կաթվածահար են արել կոռուպցիան ու բռնակալությունը: Եվ ամբողջովին ընկնելով՝ նա զոհ է գնացել բարբարոսների արշավանքին:

Ստիպված էին սպասել Միջնադարին, որ մարդկությունը նորից սկսի աշխատել այնտեղ, ուր Հռոմեական կայսրությունը հասել էր գագաթնակետին ու կանգ առել:

Նույնիսկ լավագույն կերպով ղեկավարվող և ավելի հեռատես եղած քաղաքակրթությունները թեքվել են դեպի մայրամուտ, ասես անկումը անխուսափելի է:

Երազների ժողովուրդը

Յոթանասունական թվականներին երկու ամերիկացի ազգագրագետ Մալազիայի խուռն անտառներում հայտնաբերեցին սենուա պարզունակ ցեղը, որի ամբողջ կյանքը ենթարկվում էր երազներին: Ցեղն այդպես էլ կոչվում էր՝ «երազների ժողովուրդ»: Ամեն առավոտ նախաճաշի խարույկի շուրջ նրանց զրույցն այն էր, թե ով գիշերն ինչ երազ է տեսել: Եթե սենուաներից մեկն անարդար է եղել երազում ուրիշի նկատմամբ, պիտի տուժածին նվեր աներ: Իսկ եթե ինչ-որ մեկը երազում հարձակվում էր ցեղակցի վրա, պիտի ներողություն խնդրեր և նվեր աներ զոհին, որ արժանանար ներման:

Երազների աշխարհը սենուաների համար ավելի ճանաչողական էր, քան իրական կյանքը: Եթե երեխան ասում էր, որ երազում վագր է տեսել ու փախել է, նրան ստիպում էին տեսնել գիշատչին հաջորդ գիշեր, կռվել հետը և սպանել: Ծերերը բացատրում էին երեխային, թե ոնց դա անի: Եթե երեխան չէր հաջողում երազում հաղթել վագրին, արժանանում էր ողջ ցեղի նախատինքին:

Սենուայի համակարգի համաձայն, եթե երազում սեռական ակտ ես ունենում, պետք է անպայման հասնես օրգազմի, հետո՝ իրական կյանքում շնորհակալ լինես զույգիդ նվերով: Իսկ եթե մղձավանջ ես տեսել, պետք է հաղթես թշնամիներիդ, հետո նրանցից նվերներ պահանջես, որ դառնան ընկերներդ: Երազի համար ամենացանկալի սյուժեն թռիչքն էր: Ամբողջ ցեղը շնորհավորում էր նրան, ով երազում ճախրել էր: Երեխայի առաջին ճախրանքը երազում նման էր առաջին հաղորդությանը: Երեխային նախ նվերախեղդ էին անում, ապա բացատրում, թե ինչպես հեռավոր երկրներ թռչի և այնտեղից չնաշխարհիկ բաներ բերի: Սենուաները հմայել էին արևմտյան ազգագրագետներին: Բռնությունն ու հոգեկան հիվանդություններն օտար էին այս ցեղախմբին: Սա առանց սթրեսների ու պատերազմների հասարակություն էր: Սենուաներն աշխատում էին ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ էր նվազագույն ապրուստը հոգալու համար:

Սենուաներն անհետացան, երբ սկսեցին հատել անտառները, ուր նրանք ապրում էին: Բայց մենք, այնուամենայնիվ, կարող ենք փորձել օգտագործել նրանց գիտելիքը: Հարկավոր է առավոտյան գրի առնել գիշերը տեսած երազը, անուն դնել դրան ու նշել ամսաթիվը: Հետո երազը պետք է պատմել հարազատներին, ասենք, նախաճաշի սեղանի շուրջ: Հետո պետք է առաջ շարժվել՝ օգտագործելով երազագիտության հիմնական կանոնները: Քնելուց առաջ պետք է որոշել երազի թեման և թե ինչ եք անելու՝ սար եք շարժելու, երկնքի գույնն եք փոխելու, հեռավոր երկրներ եք ճամփորդելու, տեսնելու եք չտեսնված կենդանիներ: Երազում մենք ամենակարող ենք: Երազագիտությանը տիրապետելու առաջին փորձությունը թռիչքն է. թևերը պարզել, սահասավառնել, ոլորաձև իջնել, բարձրություն վերցնել: Երազագիտությունը պետք է աստիճանաբար սովորել: «Ամառային» ժամերը ձեզ ինքնավստահություն ու երևակայություն են տալիս: Երեխաներին հինգ շաբաթը հերիք է, որ սովորեն երազները վարել: Մեծերին հաճախ շատ ամիսներ են պահանջվում:

Դուք

Այս էջը թերթելով՝ նկատում եք, որ ցուցամատով դիպչում եք թղթի մի կետի: Դա այդ կետի աննշան տաքացում է առաջացնում: Աննշան, բայց միանգամայն իրական: Անսահման մանր մեծությունների աշխարհում այդ տաքացումը բերում է էլեկտրոնի շարժման, որը լքում է իր ատոմը և բախվում ուրիշ մասնիկի:

Բայց այդ մասնիկը իրականում «հարաբերականորեն» հսկայական է: Էլեկտրոնի հարվածը նրա համար դառնում է իսկական ցնցում: Մինչ այդ նա իներտ էր, դատարկ ու սառը: Բայց էջից էջ ձեր մի թռիչքից եռման կետի է հասնում: Ձեր շարժումով դուք փոփոխություններ սադրեցիք, որոնց հետևանքների մասին երբևէ չեք էլ իմանա՝

- պայթյուն անսահմանորեն փոքր մեծությունների աշխարհում
- մատերիայի տարբեր կողմերը թռչող ֆրագմենտներ
- անջատվող էներգիա:

Գուցե միկրոաշխարհներ են ծնվել, հնարավոր է՝ այնտեղ մարդիկ են ապրում, և նրանք հայտնաբերելու են մետալուրգիան, գոլորշու վրա կերակուր պատրաստելու եղանակն ու միջմոլորակային ճանապարհորդությունները: Գուցե նույնիսկ մեզնից էլ խելացի դուրս գան: Նրանք երբեք չէին լինի, եթե դուք ձեր ձեռքը չվերցնեիք այս գիրքը, և եթե ձեր մատը չտաքացներ էջի հենց այդ հատվածը:

Դրա հետ էլ, մեր մոլորակը, անկասկած, ինքն է գտնվում մի հսկայական գրքի էջի անկյունում, կոշիկի ներբանին կամ ինչ-որ հսկաների քաղաքարթության գարեջրի բաժակի փրփուրի մեջ: Մեր սերունդն այլևս երբեք չի իմանա՝ որ անսահման փոքր և որ անսահման ահռելի մեծությունների մեջ ենք գտնվում: Բայց գիտենք, որ շատ վաղուց մեր տիեզերքը, գոնե մեր տիեզերքի մի մասնիկը, դատարկ է եղել, սառը, սև ու անշարժ: Բայց հետո ինչ-որ մեկը (կամ ինչ-որ բան) եռման կետ է առաջացրել: Թերթել են էջը, ոտքների տակ քար է ընկել, գարեջրի բաժակի երեսից փչել են փրփուրը: Որևէ գործողություն է կատարվել: Մեր դեպքում, ինչպես հայտնի է, Մեծ պայթյուն է եղել:

Պատկերացրեք միայն անսահման, անբարբառ տարածություն, որ հանկարծ բորբոքվել է տիտանական կայծից: Ինչո՞ւ վերևում մի տեղ թերթեցին էջը: Ինչո՞ւ փչեցին գարեջրի փրփուրը: Հենց նրա համար, որ ամեն ինչ զարգանար ընդհուպ մինչև այս պահը, որտեղ դու, ինչ-որ ընթերցող, ինչ-որ գիրք ես կարդում այնտեղ, ուր հիմա գտնվում ես:
Եվ հնարավոր է՝ ամեն անգամ, երբ թերթում եք այս գրքի էջը, ինչ- որ տեղ՝ անսահմանորեն մանր մեծությունների աշխարհում առաջանում է մի նոր տիեզերք:

Մտածեք ձեր ահռելի հզորության մասին:

Ընկալման տարբերությունը
Աշխարհն ընկալում ես միայն այն ժամանակ, երբ պատրաստվում ես այդ ընկալմանը:
Մի անգամ՝ ֆիզիոլոգիայից մի փորձի ժամանակ կատվի մի քանի ձագի ծնված օրից փակել են մի փոքրիկ սենյակում, որ պատերին ուղղահայաց զոլեր ունեին: Երբ կատուների ուղեղում շրջապատի նկատմամբ հիմնական պատկերացումները ձևավորվել էին, նրանց տեղափոխել են մի տուփի մեջ, որի պատերին հորիզոնական գծեր էին: Գծերը ուղղված էին դեպի թաքցրած կերակուրն ու ելքը: Բայց պատին ուղղահայաց նախշ ունեցող սենյակում մեծացած կատուներից ոչ մեկը չկարողացավ ո՛չ ուտել, ո՛չ դուրս գալ: Նրանց զարգացումը սահմանափակված էր ուղղահայաց ընկալմամբ:

Մենք ընկալման մեջ նույնպիսի սահմանափակումներով ենք գործում: Չենք կարողանում ըմբռնել որոշ իրադարձություններ, քանի որ սովոր ենք ընկալելու իրերը միայն որոշակի ձևով:

Լիլիթ

Աստվածաշնչի «Ծննդոց» գրքում Լիլիթի մասին խոսք չկա: Բայց նրա մասին խոսվում է «Զոհար» գրքում, որ վերաբերում է կաբալիստական գրական ժառանգությանը:
Լիլիթը մարդկության պատմության մեջ առաջին կինն է, որ ստեղծվել է Ադամի հետ միասին, կավից ու Աստծո շնչից: Այսպիսով՝ նա հավասար է Ադամին: Նրան կոչում են հոգու ստեղծող Ադամի, որ մինչ այդ հոգի չուներ: Լիլիթը ճաշակել է իմացության պտուղը, բայց ոչ թե մեռել է, այլ իմացել է, որ «ցանկությունը քաղցր է»: Այդ գիտելիքին տիրապետելով՝ նա պահանջկոտ է դառնում և վիճում է Ադամի հետ՝ չցանկանալով սեռական ակտի ժամանակ ներքևը լինել: Նա Ադամին առաջարկում է տեղերը փոխել: Ադամը հրաժարվում է: Վեճի ժամանակ Լիլիթը մեղք է գործում՝ Աստծո անունն է տալիս: Հետո փախչում է Դրախտից: Աստված երեք հրեշտակ է ուղարկում նրա հետևից, որոնք Լիլիթին սպառնում են՝ թե կսպանեն նրա երեխաներին, եթե սա չվերադառնա: Լիլիթը չի ենթարկվում պահանջներին և մնում է՝ քարանձավում ապրելու:
Այս առաջին ֆեմինիստուհին լույս աշխարհ է բերում նայադների ու օձի պոչով քաջքուհիների, որոնց գեղեցկությունը տղամարդկանց խելքահան էր անում:
Փոխառելով այս ավանդությունը՝ քրիստոնյաները Լիլիթին՝ «նրան, որ «ոչ» է ասել», ներկայացնում են որպես վհուկի՝ սև լուսնի թագուհու (եբրայերեն «Լեյլա» նշանակում է «գիշեր») և Սամաէլի ընկերուհու:

Միջնադարյան մի քանի փորագրությունների վրա Լիլիթը պատկերված է ճակատին հեշտոց (եթե միաեղջյուրի ճակատի եղջյուրը առնանդամի սիմվոլն է): Լիլիթը համարվում է Եվայի մրցակիցը (ով այնքանով հնազանդ է, որ ստեղծված է Ադամի կողից), նրան օտար է մայրական բնազդը, սիրում է վայելքը հանուն վայելումի և ազատության համար պատրաստ է հատուցելու իր զավակների կյանքով ու միայնությամբ:

Իդեոսֆերա

Գաղափարները նման են կենդանի արարածների: Դրանք ծնվում են, աճում, ուժ են հավաքում, բախվում են ուրիշ գաղափարների և, ի վերջո, մեռնում են:
Իսկ եթե հանկարծ մտքերը կենդանիների նման էվոլյուցիա՞ են ապրում: Իսկ եթե գաղափարների աշխարհում բնական ընտրությո՞ւն է լինում. թույլերը զոհվում են, իսկ ուժեղները՝ բազմանում, ինչպես պիտի լինի դարվինիզմի օրենքներին համաձայն: Ժակ Մոնոն 1970 թվին «Պատահականություններ և անհրաժեշտություններ» աշխատությունում վարկած է առաջադրում, որ գաղափարները գոյություն ունեն ինքնուրույն, և, որպես օրգանական արարածներ, ընդունակ են վերարտադրվելու և բազմանալու:

1976 թվին «Եսասեր գենում» Ռիչարդ Դոուկինսն առաջ է քաշում իդեոսֆերայի հայեցակարգը: Իդեոսֆերան մտքերի աշխարհում նույնն է, ինչ բիոսֆերան կենդանական աշխարհում: Դոուկինսը գրում է. «Երբ իմ ուղեղում բեղուն միտք եք ներդնում, դուք օգտագործում եք ուղեղս՝ որպես մեքենա՝ այդ գաղափարը պրոպագանդելու»: Եվ նա օրինակ է բերում աստծո գաղափարը, որի մասին միտքը մի օր ծնվել է, ու այդ օրից ի վեր շարունակում է զարգանալ ու ընդարձակվել, դա փոխանցում ու տարածում են բանավոր, գրավոր, երաժշտության մեջ,

արվեստում, իսկ հոգևորականները կրկնում ու մեկնաբանում են՝ հարմարեցնելով համապատասխան տարածքին ու ժամանակին:

Բայց գաղափարները, հակառակ կենդանի արարածների, արագ են մուտացվում: Օրինակ՝ Կարլ Մարքսի գլխում ծնված կոմունիզմի գաղափարը սրընթաց տարածվում էր՝ գրավելով մոլորակի գրեթե կեսը: Դա զարգանում էր, մուտացվում էր, հետո, ինչպես կենդանու անհետացող տեսակ, ուժը կորցրեց՝ հուզելով ավելի ու ավելի քիչ մարդկանց:
Բայց դրա հետ պատճառ դարձավ «հին ձևով կապիտալիզմ» գաղափարի մուտացվելուն:
Գաղափարների պայքարից իդեոսֆերայում առաջանում է մեր քաղաքակրթությունը:
Այսօր գաղափարի մուտացիայի արագությունը մեծանում է համակարգչի օգնությամբ:
Համացանցի շնորհիվ միտքը կարող է շատ արագ տարածվել, ավելի արագ կարող է հանդիպել իր մրցակիցներին կամ սպանողներին: Սա, ցավոք, հավասարապես վերաբերում է թե՛ լավ, թե՛ վատ գաղափարներին, քանի որ «գաղափար» հասկացությունը բարոյականության չի ենթարկվում:

Կենսաբանության մեջ նույնպես էվոլյուցիան բարոյականություն չի ճանաչում: Ահա թե ինչու, հնարավոր է՝ արժե երկու անգամ մտածել նախքան «գրավիչ» գաղափարներ արտահայտելը, քանի որ դրանք ուժեղ են դառնում մարդուց, ում ուղեղում ծագել են, և ավելի ուժեղ նրանցից, ովքեր պրոպագանդում են :

Բայց սա հեչ՝ ընդամենը գաղափար է: